

# Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

## Վա՛յ անառաւօս այս գիշերին...

Մեկ տող Սբ Գրիգոր Տաբեւացու Ներբողեանից՝ ողբերգաբար ասուած իր տիեզերալոյս վարդապետ Յովհաննէս Որոտնեցու թաղման առթիւ, որ առաջին անգամ արդի հայերենի է փոխադրվել «Այունյաց երկիր» նախածեռնությամբ: Ամբողջական տեքստը՝ Սբ Յովհանն Որոտնեցու 700-ամյակին նվիրված հատուկ համարում:

## «Այունիք» ազատ փնտեսական գոյի սպեղծելու մասին

### Վ Առեւտրաարդյունաբերական դալաս

Տարբեր երկրների հետ արդյունաբերական ենթակառուցվածքների ձեւավորման, մեծածախ առեւտրի ծավալների խթանման նպատակ հետապնդող «Այունիք» ազատ տնտեսական գոտու նախագիծը հունիսի 3-ին ներկայացվեց հայ-արաբական գործարար համաժողովի ժամանակ: Դ՞ առեւտրաարդյունաբերական պալատի ներդրումային հանձնաժողովի նախագահ, «Այունիք» ազատ տնտեսական գոտու խորհրդի նախագահ Սարգիս Աղաբեկյանի խոսքով՝ ծրագիրը ներկայացվել է ՀՀ կառավարությանը: «Այունիքում ազատ տնտեսական գոտու ստեղծման նախագիծը ներկայացրել ենք կառավարությանը, էկոնոմիկայի նախարարությունից ստացել ենք նախնական դրական պատասխան: Այժմ սպասում ենք կառավարության համապատասխան թույլտվությանը: Ծրագիրը հիմնականում ուղղված է հարեւան երկրների, այդ թվում՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ արդյունաբերական ենթակառուցվածքների ձեւավորմանը, մեծածախ առեւտրի ծավալների մեծացմանը, ինչպես նաեւ Մաքսային միության երկրների հետ կապված ենթակառուցվածքների ձեւավորմանը», - հայտնեց Սարգիս Աղաբեկյանը՝ հավելելով, որ շահագրգիռ կողմեր կան Եվրոպայից, որոնք ցանկություն ունեն արդյունաբերության մեջ ներդրումներ կատարել:

«Ներկայում գտնվում ենք բանակցությունների փուլում: Երբ կառավարությունը թույլատրի տվյալ ազատ տնտեսական գոտու կազմակերպումն ու կառուցումը, բնականաբար, աշխատանքային ծրագրի շրջանակներում մենք կիրականացնենք այն քայլերը, որոնք նախատեսված են ծրագրով, ինչպես նաեւ կփնտրենք լուծման ուղիներ այն խնդիրների ու մարտահրավերների համար, որոնց ժամանակ առ ժամանակ կհանդիպենք գործունեության ընթացքում», - նշեց պաշտոնյան:

Ազատ գոտու համար տարածքի հարցը դեռ վերջնական որոշված չէ: «Նախատեսում ենք Իրանի հետ սահմանային հատվածում, հատկապես Ազարակի հարակից մասում, կառուցել, բայց, հաշվի առնելով ռելիեֆի առանձնահատկությունները, մենք լրացուցիչ որոշում կկայացնենք՝ ելնելով նաեւ տեխնիկական հնարավորություններից», - հայտնեց Սարգիս Աղաբեկյանը: Նրա հավաստմամբ՝ ծրագիրը կարող է լուծել Այունիքի մարզում առկա աշխատատեղերի պակասի խնդիրը:

Հարցին ի պատասխան, թե արդյո՞ք այն որեւէ կերպ չի խոչընդոտի տուրիզմին, Սարգիս Աղաբեկյանը նշեց. «Տուրիզմին չի խանգարի, քանի որ ծրագիրը չի սահմանափակում տուրիզմի ենթակառուցվածքների ստեղծումը: Մենք պետք է փորձենք տարածաշրջանային մեծածախ առեւտրի եւ բիզնես հարաբերությունների դաշտում ստեղծել այնպիսի կոմունիկացիաներ, որոնք կնպաստեն, ոչ թե կխանգարեն տուրիզմի զարգացմանը», - ավելացրեց բանավարդը:

Սարգիս Աղաբեկյանի տեղեկացմամբ՝ նախնական բիզնես ծրագրով նախատեսված է, որ օպերատորի կողմից 15 միլիոն դոլար պետք է ներդրվի ենթակառուցվածքների պատրաստման համար: «Ռեալ ներդրումները կարող են շատ տարբեր լինել: Արդյունաբերական համալիրներ կան, որոնց ծավալները ներդրումների տեսակետից մեկ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՑ 2



Մեսրոպ Ամիրջանյան, Ծղուկի գյուղապետ

## Ծղուկը՝ համայնքների խոշորացման շեմին

### Վ Սարգի գյուղեր

Վարչապետ Յուրի Աբրահամյանը կառավարության ծրագրի ներկայացման ժամանակ հայտարարեց, որ կառավարությունը պատրաստվում է Հայաստանի համայնքները խոշորացնելու ծրագիր սկսել, որի արդյունքում գոյություն ունեցող 915 համայնքի փոխարեն կլինի 250-300 համայնք: Սա դեռ ամենը չէ. մշակվել է խոշորացման երկու տարբերակ՝ փնջային եւ շրջանային, ըստ այս վերջինի՝ հանրապետության բնակավայրերը կմիավորվեն 50 համայնքի մեջ: Ինչ կտա այդ

միավորումը, ցույց կտա ժամանակը, այժմ կան կողմ եւ դեմ կարծիքներ: Նաեւ տեղեկացվում է, որ համայնքների համախմբումը լինելու է մի քանի կարեւոր գործոնով պայմանավորված: Դա կարող է լինել մի ապրանքանիշի շուրջ (Տաթև), մեկ քաղաքային համայնքի շուրջ (Մեղրի, Դիլիջան, Ջերմուկ), ընդհանուր բիզնես նախագծի իրականացմամբ՝ պայմանավորված (Ձառիթափ, Սառնակունք) աշխարհագրական եւ ռելիեֆային առանձնահատկություններով: Նշվում է, որ նույն համայնքի մեջ ընդգրկվող բնակավայրերի միջեւ հեռավորությունը չպիտի գերազանցի 20 կիլո-

մետրը: Սա որպես նախաբան: Լինելով Սիսիանի տարածաշրջանի Ծղուկ համայնքում, նախ գյուղապետ Մեսրոպ Ամիրջանյանից հետաքրքրվեցինք, թե ինչ կտա համայնքների խոշորացումը, մասնավոր՝ որ ըստ այդ ծրագրի պիտի միավորվեն Սպանդարյան, Սառնակունք, Ծղուկ, Գորայք համայնքները: Մեր գրուցակցի փոխանցմամբ՝ դրական միտումներից բացի ինքը մտավախություն ունի, որ կենտրոն համարվող գյուղը փոքր-ինչ զարգանալու է, իսկ մյուսները տեսադաշտից դուրս են լինելու:

### Համայնքը եւ նրա ղեկավարը

Գյուղը նախկինում կոչվում էր Բորիսովկա: Ծղուկ տեղանունն ստացել է անցյալ դարի 60-ական թվականներին Ծղուկ գավառի անվամբ: Բնակավայրի սկզբնական բնակիչները մոլոկան ռուսներ էին, ովքեր 1828-1830 թվականներին տեղափոխվել են Հյուսիսային Կովկասից: Սպանդարյան ջրամբարի կառուցման պատճառով ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՑ 5

## Սահյանական փարի

### ՀԱՅ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԶԱՐՄԱՆԱՀՐԱՇ ՏԵՍԱԿԸ


Համո Սահյանը իր պոեզիայում, դարերի վեր առանց պետականության պատմական արհավիրքներին դիմակայած, իր ինքնությունը չկորցրած, նահապետական մաքրամաքուր առաքինությունները հավատամբ դարձրած, ողջախոհ խառնվածքի սովորական հայ մարդու ոգեղենության տիրույթների հրեղեն խորհուրդը կարողացավ մեկնել...

Մարդկային բարոյախոությանը շա-

ղախված, հայրենի եզերքի ու բնության հանդեպ տածած սերը պաշտամունքի վերածած՝ բանաստեղծի այսպիսի զարմահարաշ տեսակ չէր եղել մեր պոեզիայում: Ժամանակների մեջ չխամրող, բանաստեղծի մնայնության հարցում մի-մի զորավարի դեր կատարող բանաստեղծություններ ունենալը Պարոյր Սեւակը երանելի բարեբախտություն էր համարում: Համո Սահյանը կարողացավ հեղինակը դառնալ այնպիսի բանաստեղծությունների, որոնք ասես մեր ողջ ժողովրդի մորմոքներից ու կարոտներից երկնված հոգեպարար հրովարտակներ լինեն:

Հենց այս իրողության հանգամանքով է պայմանավորված Սահյանի ժողովրդականության, նրա պարզ ու անպաճույճ բանաստեղծական հուզաշխարհի մոգականության գաղտնիքը...

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Մայիս 2014թ., ք.Գորիս



Պատկերը հեղինակի ֆոտոգրաֆիայի է:

# Գործիք քվեարկեց Վաչագան Ադունցի օգտին

## ՎՃՏՐՈՒՄ

**Հունիսի 8-ի ժամը 23.00-ի սահմաններում Գործիքի Սուրբ Գրիգոր Տաթևացու անվան հրապարակում հրավառություն էր: Ընտրողների հոծ բազմությունը խանդավառությամբ նշում էր Վաչագան Ադունցի հաղթանակը Գործիքի քաղաքապետի ընտրությունում: Հետևում էին մնացել նախընտրական բուն իրադարձություններով հագեցած ամիսները:**

16171 ընտրողից քվեարկությանը մասնակցեց 8204 հոգի (ընտրողների 50.7 տոկոսը)։ մենք նախորդ հրապարակումներում կանխատեսել էինք մոտ 50 տոկոս՝ հինգ ընտրվելով վերջին 15 տարում Գործիքում տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններին առնչվող վիճակագրությունը: Անվավեր ճանաչվեց 510 քվեաթերթիկ (6.2 տոկոս): 8198 կողմ քվեաթերթիկից Վաչագան Ադունցի օգտին էր 4732-ը (61.56 տոկոս), Հայր Զույանի օգտին՝ 2956-ը (38.44 տոկոս):

Ինչպես տեղեկացնում է N37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմեն Ստեփանյանը, քվեարկության օրվա ընթացքում որևէ բողոք չի ստացվել տեղամասային կենտրոններից եւ ընտրողներից:

Գործիքի քաղաքապետի ընտրությանը հետևել են դիտորդական չորս կազմակերպության ներկայացուցիչներ:

Թվերը՝ քվե, բայց մի քանի դիտարկում չենք կարող չանել հունիսի 8-ի գործիքային ընտրության կապակցությամբ:

Նախ՝ օրը Գործիքում խաղաղ էր ու բարի, ոչ մի էքսցես, ոչ մի բողոք, ոչ մի կոնֆլիկտ: Կար նախընտրա-



կան շտաբերի ակտիվությունը, որ բնական պիտի համարել: Մարդիկ ունենին բոլոր հնարավորությունները կամքը ազատ, խղճի մտքը արտահայտելու համար:

Գործիքի քաղաքապետի ընտրությունը, ինչպես եւ սպասվում էր, հայտնվել էր մայրաքաղաքային լրատվամիջոցների համակ ուշադրության կենտրոնում: Քաղաքում այդ օրն աշխատում էր մայրաքաղաքային 18 լրատվամիջոցի ներկայացուցիչ:

Գրեթե բոլոր լրատվամիջոցները շատ հետաքրքիր, անկեղծ ու ճշմարիտ տեղեկատվություն էին տարածում քվեարկության ընթացքի մասին: Միայն քաջարանյան կլանի կողմից ֆինանսավորվող կայ-

քերն էին (2-3 կայք), որ օրվա մեջ անընդհատ ու հետեւողական «տեղեկատվություն» էին շաղ տալիս՝ իբր Գործիքում պայթյունավտանգ վիճակ է, լարված դրություն, վախի մթնոլորտ: Ամենահետաքրքիրն այն է, որ այդ կայքերի ներկայացուցիչներին չտեսանք Գործիքում: Նրանք Գործիքի քաղաքապետի ընտրության մասին դատողություններ էին անում հեռվից: Կայքերից մեկը, որ վերջին ամիսներին ջանք ու եռանդ էր խնայել գործիքից հեռու միմյանց դեմ հանելու ուղղությամբ, կարծում էր (այդպես էլ հրամանում էր ընթերցողին), թե Հայաստանում կա Գործիքի մարզ՝ համանուն կենտրոնով ու մարզապետով:

Մայրաքաղաքից ժամանած

լրագրողները, որոնց հետ առիթ ունեցանք շփվելու, կարմրում էին իրենց գործընկերների նման պահվածքի ու անտեղյակության համար: Գործիք այդ օրը, իսկապես, հայտնվել էր հանրապետության հասարակական-քաղաքական ուժերի, բազմաթիվ կազմակերպությունների ու գերատեսչությունների ուշադրության կենտրոնում: Գործիք էին այցելել հյուրեր ամենատարբեր տեղերից: Գործիք էին եկել միայն Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչները: Տպավորությունն այնպիսին էր, որ Գործիքը Սյունիքի մարզի մաս էր կազմում: Առհասարակ հունիսի 8-ն էլ ավելի խորացրեց այն ջրբաժանը, որ վերջին մեկ տարում Գործիքի ու Սյունիքի մարզապետարանի միջև հետեւողական ջանքով ու ներդրումով կառուցում էր Վահե Հակոբյանը:

Ինչպես արդեն ասացինք՝ միայն 2-3 կայք էին՝ մայրաքաղաքում ծվարած, որ օրվա մեջ մի քանի անգամ ընթերցողին տեղեկացրին Գործիքում ստեղծված «պայթյունավտանգ ու լարված» վիճակի մասին: Գործիքում, սակայն, դրանից չէ, որ աչառ էին: Գործիքում զարմացած էին մեկ այլ իրողությունից: Աշխարհում երեւի թե միակ անկյունը Սյունիքն է, որի օրվա վարիչները ծախսեր են անում իրենց իսկ կողմից կառավարվող, իրենց իսկ փոքր հայրենիք համարվող երկրամասը մայրաքաղաքային լրատվամիջոցներով վարկաբեկելու համար: Իսկապես, աշխարհում դժվար թե գտնվի նման մեկ այլ երկրամաս,

ավելի ճիշտ՝ նման մեկ այլ երկրամասի իշխանավոր...

Գործիքի քաղաքապետի ընտրությունն է սկզբանե ներկայացվել էր որպես Սուրեն Սաչախչյանի եւ Մաքսիմ Հակոբյանի միջև ու հերթական «դուել», ավելի ճիշտ որպես պեքսիստ՝ նրանց վարկանիշը ճշտելուն միտված: Ըստ էության դրանում ճշմարտության մեծ չափաբաժին կար: Ընդ որում՝ դա 2013թ. հունիսի 1-ի հայտնի ողբերգությունից հետո առաջին հանրաքվեն պետք է լիներ (եթե կարելի է, իհարկե, այդպես անվանել): Եվ եղավ այդ պեքսիստը: Սուրեն Սաչախչյանը ստացավ քվեարկության մասնակիցների 62 տոկոսի աջակցությունը:

Այդ թիվը հետաքրքիր է մեկ այլ առումով եւս. քվեարկությանը նախորդած մի քանի ամսում որոշ գերատեսչությունների ներկայացուցիչներ (որ մի պահ նաեւ քաղաքապետի թեկնածու էին) մայրաքաղաքային մամուլի օգնությամբ անընդհատ հրամցում էին մեզ, որ իրենք Գործիքում ունեն 80 տոկոս վարկանիշ: Հունիսի 8-ը վերջնականապես ցույց տվեց, որ դա սովորական միջ է:

Իմիջիայլոց, Գործիքի քաղաքապետի ինքնաբացարկ ներկայացրած երկու թեկնածուն կողք էին կանգնել ընտրապայքարից: Նրանք (դա էլ նորմալ է սպասված էր) անթաքույց կանգնեցին Հայր Զույանի կողքին եւ որոշակի ազդեցություն ունեցան քվեարկության արդյունքների վրա:

Ինչպես, Գործիքի քաղաքապետի ընտրությունն արդեն հետեւում է մնացել: Ուժերի մոտ դասավորության բնորոշիչներից մեկն այն է, որ ընտրողների մոտ 38 տոկոսը Գործիքի նորընտիր քաղաքապետին կողմ չէ: Վաչագան Ադունցը դրանից պետք է հետևանքներ անի ու գործնականում լինի նաեւ նրանց քաղաքապետն ու իրենից կախված ամեն ինչ անի՝ համայնքում համերաշխությունն ամրապնդելու համար:

ՍԱՍՎԵ ԱՆԵՔԱՆՅԱՆ

## «Սյունիք» ազատ տնտեսական գոտի ստեղծելու մասին

### ՎՃՏՐՈՒՄ ԱՆՏՐԱՐԱՊՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ՊԱՂԱՏ

ՍԿԻՉԸ ԷՏ 1

միավորի դեպքում 100-200 միլիոնից կարող են անցնել: Համապատասխան բույսերի մշակման հետո ներդրողների հետ մենք քննարկումներ կանենք՝ ըստ արդյունքների», - նշեց նա:

Խոսելով «Սյունիք» ազատ տնտեսական գոտու ստեղծման ժամկետների մասին՝ մասնագետը նշեց, որ բիզնես օրագրով նախնական ենթակառուցվածքների ձեւավորման համար սահմանված է առավելագույնը երեք տարի: «Բայց քանի որ արդյունաբերության հետ գործ ունենք, կախված տեխնիկատնտեսական հաշվարկներից, այլ բիզնես պարամետրերից, որպեսզի ամբողջական բիզնես հատվածը գործի, ավելի շատ ժամանակ կպահանջվի, իսկ առետրի ենթակառուցվածքները կգործեն սեղմ ժամանակահատվածում: Այստեղ խոսքը վերաբերում է մեծածախ առետրի կազմակերպմանը, որը չի ենթադրում մաքսային առումով ապրանքների մուտքն ազատ տնտեսական գոտի, այլ այնտեղ միայն կլուծվի լոգիստիկ խնդիրը, այսինքն՝ արդեթի կազմակերպումը», - հայտնեց Սարգիս Աղաբեկյանը:

maxinfo.am

## Մարզի բուհերի դիմորդների թիվը շարունակում է մտահոգիչ մնալ

### ՎՃՏՐՈՒՄ ԲԱՐՃՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒՅՈՒՆ

Հանրապետության կրթությանը ներդրում են միասնական քննությունները, որոնք կավարտվեն հունիսի 23-ին «Ռուսաց լեզու» առարկայի քննությամբ: «Սյունյաց երկրին» հետաքրքրում էր, թե 2014-15 ուստարվա համար որքան տեղեր են հատկացված մարզի բուհերին՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղին եւ Գործիքի պետական համալսարանին, եւ որքան դիմորդներ ունեն այդ կրթօջախները: ՀՊԵՅ Կապանի մասնաճյուղի տնօրեն, մանկավարժական գիտությունների դոկտոր Լեռնիկ Պետրոսյանի փոխանցմամբ՝ իրենց բուհում նույնն է մնացել առկա մասնագիտությունների թիվը՝ 6: Մասնաճյուղին հատկացված է 120 տեղ, այդ թվում 14-ը՝ պետաֆակտի համար: Այդ ամենի համար հավակնում է 68 դիմորդ, նախորդ տարի 66 էր: Ընդ որում՝ 14 անվճար տեղի համար պայքարում է 31 դիմորդ: Լեռնիկ Պետրոսյանը տեղեկացրեց, որ դիմորդները հիմնականում կողմնորոշված են, «կտրվողների» թիվը տարեցտարի նվազում է, նախորդ ընդունելությանն իրենց բուհ դիմած դիմորդների 73 տոկոսն ընդունվել է, եւ հույս ունի, որ այս տարի դիմածների 75 տոկոսից ավելին հաղթահա-

րելու է ընդունելության շեմը: ՀՊԵՅ Կապանի մասնաճյուղը հիմնականում դիմում են Կապանի եւ Քաջարանի դպրոցների շրջանավարտները: Այս առումով մասնաճյուղի տնօրենը նշեց, որ երկու տարի Մեղրու տարածաշրջանի դպրոցներում հանդիպումներ են լինում, բայց անցյալ տարի միայն մի դիմորդ է եղել, նա էլ անբավարար է ստացել: Այս գարնանը բուհի կազմակերպած «Բաց դռների օր» միջոցառմանը մասնակցում էր 12-13 դպրոցական Մեղրուց եւ Ագարակից: Բայց միեւնույն է՝ դիմորդներ չէին այդ տարածաշրջանից, թեեւ այդտեղ է գտնվում մարզի խոշորագույն համալսարանաբերական ձեռնարկություններից մեկը՝ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը:

Ինչպես փոխանցեց Գործիքի պետական համալսարանի 2014-15 ուստարվա ընդունելության քննությունների ընդունող հանձնաժողովի քարտուղար Տիգրան Վանդունցը, բուհին հատկացված է 210 տեղ, 18-ը՝ անվճար, 192-ը՝ վճարովի համակարգում: Նշված տեղերի համար դիմել է 142 հոգի: Անցյալ տարվա ընդունելության ժամանակ դիմորդների թիվը 147 էր: Բնագիտական մասնագիտությունների գծով դիմորդների թիվը մտահոգիչ է (մաթեմատիկա՝ 5, ֆիզիկա՝ 3, կենսաբանություն՝ 5): Համեմատաբար շատ են դիմորդները «Ձեռնարկությունների տնտեսագիտություն եւ կառավարում»,

«Մանկավարժություն եւ մեթոդիկա», «Հայոց լեզու եւ գրականություն» մասնագիտությունների գծով:

Որ բուհերում քրոնիկորեն նվազում է դիմորդների թիվը, տեղեկանում ենք հանրապետական մամուլից: Ուշագրավ տեղեկություններ է հաղորդում «168 ժամ» թերթը «Բուհ կընդունեն բոլորին» հրապարակման մեջ: Ըստ պարբերականի՝ եթե 2008-09 ուստարում հանրակրթական դպրոցում սովորում էր 414,8 հազար աշակերտ, ապա 2012-13 ուստարում սովորողների քանակը նվազելով հասել է 368,7 հազարի: Ինչ վերաբերում է բարձրագույն կրթության համակարգին՝ 2008-09 ուստարում Հայաստանի բուհերում սովորում էր 114,4 հազար ուսանող: 2012-13-ի ցուցանիշը 90,1 հազար է: Ուրեմն բուհերին մի էլք է մնում, եզրակացնում է թերթը, ընդունել բոլոր դիմորդներին եւ առնվազն չորս տարի վարձավճար գանձելով՝ ձեւացնել, թե նրանց կրթություն է տալիս: Շարունակելով թեման՝ հոդվածագիրը գրում է, որ Հայաստանում ներկայումս գործում է արտոնագրված 65 բուհ: «Բարձրագույն կրթության որակի գնահատականը տալուց ցանկանում են նշել միայն դրանցից մեկի անունը՝ Նոր Գեղիի ագրոբիզնեսի եւ մենեջմենթի ակադեմիա: Ուրիշ ասելիք չկա», - տխուր եզրահանգման է գալիս թերթը:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ



## ՏԻՄ ընտրություններ մարզում

### ՀՈՒՆՅԱՆ 8-ԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՆԵՐՈՒՄ ԱՆԳՎԱԳՎԵՑԻՆ ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒՄԱՆ ԻՆՑԻՏԻՎՆԵՐԻ ԸՆԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

N37 ընտրատարածքում Գործիքի քաղաքապետի ընտրությունից բացի ընտրություններ տեղի ունեցան Թանահատում եւ Իշխանասարում: Առաջինում գյուղապետ ընտրվեց հանրապետական Արսեն Օհանյանը՝ ձայների 19 կողմ, 4 դեմ հարաբերությամբ: Իշխանասարում ընտրվեց ավագանի, ընդ որում՝ թեկնածուներից երկուսը հավաքեցին հավասար՝ տասական ձայն, եւ թե ով կլինի համայնքի ավագանու իրագերորդ անդամը, կորոշի վիճակահանությունը:

Սյունիքի մարզի N38 ընտրատարածքում համայնքի ղեկավարի ընտրություն է կայացել Աճառանում եւ Օխտարում եւ երկու դեպքում էլ վերընտրվել են գործող գյուղապետերը՝ հանրապետականներ Վաչե Ավետիսյանը եւ Վաղարշակ Համբարձումյանը:

# Արդյո՞ք Գորիսի պետհամալսարանում ստեղծվել է «կիբեր-ահաբեկման» խումբ եւ արդյո՞ք այն ղեկավարում է Գորիսի պետհամալսարանի տնօրեն Յուրի Սաֆարյանը

**Գորիսի պետհամալսարանի տնօրեն Յուրի Սաֆարյանի մասին օրեր առաջ գրված մեկ-երկու նախադասությունը՝ կապված նախընտրական Գորիսի իրավիճակի հետ, բավարար եղավ, որ ամբողջ համալսարանում պայթյուն տեղի ունենա:**

Դա մայիսի 27-ն էր: Եվ «Այուրյաց երկիր» խմբագրին հայիտելու համար, ինչպես նշել ենք, ուրքի հանվեց կիսագրագետների մի ամբողջ նախիր: Այդ նախիրը ֆեյսբուքյան իր գրառումներում սկսեց հայիտել ոչ միայն թերթին ու նրա խմբագրին, այլև խմբագրի ընտանիքի անդամներին:

Մենք, իհարկե, խոստացել ենք ժամանակի ընթացքում անդրադառնալ այդ վնասողներից յուրաքանչյուրի հեղինակին: Եվ կանոնադառնա՞նք: Սակայն, պարզվում է, դրանց հեղինակների ստորագրությունների մեծագույն մասը կեղծված է, եւ չենք կարողանում ճշտել, թե ում հետ պիտի բանակցվի դուրս գանք:

Օրինակ, մեզ պետհամալսարանից ասում են, որ Սամվել Ալեքսանյանի մասին վայրահաչողներից մեկը՝ Յայկ Միրզոյան անուն-ազգանունով մարդը, (այդ

միջավայրում) գոյություն չունի: Իրը Յայկ Միրզոյանի անվամբ ծափված է մի կին դասախոս: Համալսարանում նույնիսկ չըջանառվում է այդ կնոջ անունը, որը հրապարակելուց առաջ փորձում ենք վերջնականապես ճշտել:

Գորիսի պետհամալսարանից ստացվող մեկ այլ տեղեկատվության համաձայն՝ թղթակցի պաշտոնը զբաղեցնող եւ ճենճերահոտ մեկ այլ աղջիկ անձամբ է զանգահարում համալսարանի ուսանողներին եւ անզամ չըջանավարտներին՝ Սամվել Ալեքսանյանին ու նրա ընտանիքի անդամներին ֆեյսբուքում հայիտելու համար, քանի որ թերթի խմբագիրը համարձակվել է խախտել Յուրի Սաֆարյանի քառորդարյա անդորրը:

Գորիսի պետհամալսարանի նույն աղբյուրը կարծիք է հայտնում, որ անբարոյ այդ աղջկա երիցս անբարո գործողությունները չեն տեղավորվում ինքնաբերաբար, ինքնուրույն գործելակերպի մեջ: Նա պետհամալսարանի կոնկրետ հաստիքով աշխատող անձնավորություն է եւ օրը ցերեկով, օգտվելով նաեւ համալսարանի հեռախոսներից, զբաղվում է խուլիգանությամբ ու վարկաբեկում առանց այդ էլ վարկաբեկված համալսարանը:

Եվ այդ ամենից հետո բնական



ՄԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

հարց է առաջանում՝ ինչպե՞ս է պետհամալսարանի աշխատակիցն օրեր շարունակ զբաղվում խուլիգանությամբ ու անբարո արարքով եւ տնօրենի կողմից մնում աննկատ: Ինչպե՞ս է ստացվում, որ պետհամալսարանի ամեն մի պուճախում իր ծախսյալ ներկայացուցիչն ու վարձկանն ունեցող տնօրենը չի իմանում իր ենթակամերից մեկի հարատեւող խուլիգանության մասին:

Յուրի Սաֆարյանը պետք է պարզի այն համալսարանականներին, ովքեր համացանցում օրեր շարունակ զբաղվում են խուլիգանությամբ, ապացուցի, որ ինքը չէ «կիբեր-ահաբեկման» խմբի ծախսյալ ղեկավարն ու ֆինանսավորողը:

**ՄԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

## ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովին

**Հարգելի պարոն Շարմազանով** Գորիսի պետհամալսարանի տնօրենի՝ Մախրեմյանի Գորիսում դրսևերած դատապարտելի վարքագծի մասին մեր կողմից գրված մեկ-երկու նախադասության համար մեծ արշավանք է սկսվել ոչ միայն իմ ու «Այուրյաց երկիր» թերթի, այլև ընտանիքիս անդամների դեմ:

Բայց դա՞ ոչինչ: Ուշագրավն այն է, որ Գորիսի պետհամալսարանում այդ նպատակով ստեղծված «կիբեր-ահաբեկման» խմբի կողմից կեղծվող ստորագրությամբ հոդվածները տեղ են գտնում նաեւ Ձեր ընտանիքին պատկանող ու Մաքսիմ Հակոբյանի մայրաքաղաքային գրասենյակներից մեկում հանգրվանած «henaran.am» կայքում:

Ավագժը հավաստող երկու փաստ՝ ա) «Գորիսում իրար դեմ են ելել նաեւ թեկնածուների կողմնակիցները. Քունուցն ընդդեմ Սամվել Ալեքսանյանի» (3 հունիսի 2014թ.), բ) «Գորիսի մտավորականները մի բուռ չհասած ծիրանի համար» (5

հունիսի 2014թ.):

Արձագանքները, բնականաբար, նորմալ երեւոյթ կարող էինք համարել, եթե նշված հոդվածների տակ լինէր իրական հեղինակի ստորագրությունը: Հոդվածներն իբր հեղինակած Յայկ Միրզոյանը, ըստ Գորիսի պետհամալսարանում իշխող կարծիքի, համալսարանի բանասիրության կին դասախոսներից է (տիկիճը չի կարողացել նույնիսկ հրաժարվել իրեն բնորոշ բառապաշարից):

Մենք, իհարկե, փորձում ենք վերջնականապես ճշտել այդ անբարո գոյության ով լինելը եւ համապատասխան ձեւով արձագանքել հրապարակումներին:

Թե ինչպես են կեղծ ստորագրությամբ հոդվածները հայտնվել այդ կայքում՝ դա մի կողմ: Մի կողմ ենք թողնում նաեւ իրողությունը, որ «henaran.am»-ում առհասարակ հաճախակի են տեղ գտնում կեղծված ստորագրությամբ նյութեր՝ Սյունիքի մարզին առնչվող: Չենք զարմանում նույնիսկ աննախադեպ քստմունքի ու արտառոց երեւոյթից, որ Սյունիքի գործող մարզպետի ընտանիքի կողմից ֆինանսավորվող կայքն է լծվել Սյունիքի մարզի մասին կեղծ եւ չստուգված տեղեկություններ տա-

լածելու անբարո գործին:

Մենք այլ խնդրանք ունենք Ձեզ՝ օգնեք ճշտելու, թե ով է նշված զրպարտագրերի հեղինակ Յայկ Միրզոյանը: Դուք, որպես Աժ փոխնախագահ, որպես բարոյական ու պետական լուրջ առաքելություն իրականացնող անձնավորություն, կարծում ենք, դրականորեն կարծազանցեք մեր խնդրանքին:

Ինչո՞ւ ենք սույն խնդրանքը Ձեզ ներկայացնում:

Ըստ հանրության մեջ տարածված կարծիքի՝ նշված կայքը Ձեր ընտանիքի սեփականությունն է: Բայց, որքան էլ տարօրինակ է, կայքը, ի տարբերություն համանման մյուս լրատվամիջոցների, որեւէ տեղեկություն չի պարունակում այն մասին, թե ով է հիմնադիրը, ով է խմբագիրը: Ահա ինչու էլ դիմում ենք Ձեզ՝ ակնկալելով եւ ըմբռնում, եւ օժանդակություն՝ հայտնաբերելու ծափված զազրախոսի ու զրպարտչի իրական անուն-ազգանունը, հասցեն: Իսկ եթե Դուք մատնանշեք կայքի հիմնադիր եւ խմբագրի անունը, ապա մեր խնդրանքը կվերահասցեագրենք նրան:

**Հարգանքով՝ ՄԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ «Այուրյաց երկիր» թերթի խմբագիր**

## ՀՀ ֆինանսների նախարարության Գորիսի տարածքային հարկային տեսչության պետ Հարություն Գրիգորյանին

**«Այուրյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանից Տեղեկություն ստանալու հարցում**

**Հարգելի՛ պարոն Գրիգորյան** Համաձայն ՀՀ սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում են իմ ծրարագրերը տեղե-

կություններ այն մասին, թե Գորիսի պետհամալսարանի դասախոսներ Լուսինե Ներսիսյանն ու Միեր Քունուցը, որ բարձրագույն եւ այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ են իրականացրել իրենց բնակարանում, արտոնագրային վճար վճարել են պետությանը, թե՞ ոչ: Խնդրում են տեղեկություն տրամադրել նաեւ այն մասին, թե նշված անձինք արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություն երբեւէ ներկայացրել ու հաշվառվել են տարածքային հարկային մարմնում:

« Տ ե ղ ե կ ա տ վ ու թ յ ա ն ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու

գրավոր հարցմանը պատասխան տրվում է հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում են տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում են գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ: **Սամվել Ալեքսանյան 11 հունիսի 2014թ.**

# Իսկապե՞ս Գորիսի պետհամալսարանի հայոց լեզվի դասախոսը թուրքերենի մասնագետ է

**Նարցուն**

Նախընտրական աննախադեպ խաղաղ օրեր ապրող Գորիսում, երբ քաղաքապետի թեկնածուների թիվերն անզամ համերաշխության մեջ են, բուռն քննարկումներ են ծավալվել «Այուրյաց երկիր» թերթի՝ Գորիսի պետհամալսարանին առնչվող վերջին հրապարակումների շուրջ: Համալսարանի տնօրեն Յուրի Սաֆարյանը, բարձրացված հարցերի իսկությունը ստուգելու եւ հանրությանը պարզաբանումներ տալու փոխարեն, զորահավաք է հայտարարել միջակների ու մերժվածների փաղանգում՝ նրանց միջոցով ֆեյսբուքյան հարթակ նետելու կիսագրագետ խզբզանքներ՝ ուղղված տողերիս հեղինակին ու նրա ընտանիքի անդամներին: Անփառունակ են անբարո ցատկոտումի այդ ճանապարհին նրա տրամադրության տակ է հայտնվել Մաքսիմ Հակոբյանի մայրաքաղաքային գրասենյակներից մեկում գոյատեւող «Հենարան» կայքը: Ի դեպ, մաքսիմյան իմպերիան, որի հանդիսավոր հուղարկավորությունն արդեն մեկնարկել է, ջանում է մինչեւ վերջին ակնթարթը խոչընդոտներ հարուցել «Այուրյաց երկրին»:

Անտարակույս, բացարձակ ճիշտ գործելակերպ է որդեգրել Յուրի Սաֆարյանը: Եթե նա հրաժարվում է քաղաքակիրթ ձեւով քննարկել մեր կողմից բարձրացված հարցերը, ապա պետք է գոնե ապակողմնորոշի հանրությանը (ինչով եւ զբաղվում է բուռն եռանդով)՝ հերյուրանքներ տարածելով Սամվել Ալեքսանյանի եւ նրա ընտանիքի անդամների դեմ:

Մենք, այդուհանդերձ, Յուրի Սաֆարյանին հանդարտության կոչ չենք անում, նա կարող է իր սպասավորների միջոցով շարունակել հայիտանքն ու զրպարտությունը: Մենք պարզապես համակ ուշադրությամբ հետեւում ենք այդ վայրահաչություններին եւ խոստանում ոչ մի բառ կամ նախադասություն չթողնել անպատասխան: Բայց դա՞ մի քիչ հետո: Իսկ հիմա չենք կարող չասել, որ Գորիսի պետհամալսարանի բազմաթիվ դասախոսներ արձագանքել են մեր հրապարակումներին ու դրանք համարել վաղուց սպասված խոսք:

Դասախոսները միաժամանակ բազմաթիվ խնդրանք եւ առաջարկություն են ներկայացրել

թերթի խմբագրություն՝ կամենալով ճշտել որոշ հարցերի պատասխան, քանզի դրանց մասին խոսելն արգելված է համալսարանում: Հարցերի մի մասը տեղ է գտել ստորեւ ներկայացվող փաստաթղթում: Սակայն հարցադրումներ ենք ստացել նաեւ այն բանից հետո, երբ մեր գրությունն արդեն իսկ ուղարկված էր Յուրի Սաֆարյանին:

Մասնավորապես, դասախոսները հարցնում են՝ իսկապե՞ս Գորիսի պետհամալսարանի հայոց լեզվի դասախոս Միեր Քունուցը թուրքերենի մասնագետ է եւ արդյո՞ք հայոց լեզվի դասախոսը է ստացել այդ ամբողջի վարիչ Լուսինեի շնորհիվ, ով նրա կինն է:

Պետական համալսարանի դասախոսներն ուզում են իմանալ նաեւ, թե ինչ հիմունքներով է մեկ այլ հայտնի աղջիկ անթաքույց խառնվում պետական համալսարանի կառավարմանը եւ տնօրենի անունից կամ տնօրենի փոխարեն հանձնարարականներ տալիս համալսարանի պրոֆեսորդասախոսական անձնակազմին ու աշխատակազմին առհասարակ:

Մենք հավատում ենք, որ նշված հարցերի վերաբերյալ նույնպես կստանանք Յուրի Սաֆարյանի պատասխանը, այլապես ստիպված կլինենք եւս մեկ պաշտոնական հարցում ուղղել նրան՝ հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը:

Գորիսի պետական համալսարանի մի խումբ դասախոսներ նաեւ առաջարկել են մեզ պրոֆեսորդասախոսական անձնակազմի հետ դեմ առ դեմ հանդիպման ու բանավեճի համար այցելել համալսարան:

Այդ կապակցությամբ հայտարարում ենք՝ պատուաւստ ենք ցանկացած ժամանակ ու ամեն մի լսարանում դեմ առ դեմ հանդիպել ու բանավեճել Գորիսի պետական համալսարանի պրոֆեսորդասախոսական անձնակազմի հետ, եթե ստանանք համալսարանի տնօրենի կամ համապատասխան նախաձեռնող խմբի պատշաճ հրավերը:

Ստորեւ՝ մեր պաշտոնական հարցումը մի քանի հարցի վերաբերյալ, որ ս.թ. հունիսի 6-ին փոստով ուղարկվել է համալսարանի տնօրենին:

**ՄԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Գորիսի պետական համալսարանի տնօրեն Յուրի Սաֆարյանին «Այուրյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանից Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Սաֆարյան

Համաձայն ՀՀ սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում են ինձ տրամադրել ԳԴԳ դասախոս Միեր Քունուցի թեկնածուական արձագանքները: Նրա գիտական համարվող հոդվածները՝ գրված 2004-2014 թթ.վազմանում, ինչպես նաեւ նրա կենսագրությունն ու բարձրագույն կրթության մասին զնալուծի պատճենը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքակիրթ տեղեկություն ստանալու գրավոր ծաղցմանը պատասխան տրվում է հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում են տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում են գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը: (Դատարանում եմ վճարել տեղեկատվության պատճենատրաման մասին):

Կանխավ շնորհակալ եմ: *Սամվել Ալեքսանյան* Սամվել Ալեքսանյան 11 հունիսի 2014թ.

# Ես տեսնելու եմ ձեր վերջը



**ՈԱՅԻԿ ԱՐԱՅԱՆ**  
Քաջարանի գյուղապետ

## Արձագանք

**Ս.թ. ապրիլի 16-ին «Յերջը» Մարինե Մարտիրոսյան և Վահե Մարուխանյան ստորագրությանը հրապարակել է իբր Մաքսիմ Չակոբյանի հետ փոփոխությունները հարցազրույցը շարք ողորմելի վերնագրով՝ «Կան տեղեր, որ պիտի դիվարվեն լինեն, որ կարողանաս գործերն առաջ տանել»:**

Այսպես կոչված հարցազրույցում Մաքսիմ Չակոբյանը մի կողմ է շարժել դիմակը և կրկին խոսել իր փոփոխության մասին:

Հարցազրույցի սկիզբը ծիծաղելի է. իբր լրագրողներն աշխատում էին Աջաբաջ գյուղի տարածքում և

հանկարծ այնտեղ է հայտնվում Մաքսիմ Չակոբյանը, մեքենայից իջնում և գրույցի բռնվում լրագրողների հետ: Այդ դրվագն իսկապես ծիծաղելի է: Ովքեր մի քիչ ճանաչում են Մաքսիմ Չակոբյանին՝ շատ լավ գիտեն, որ նա լրագրողներից ավելի շատ է սարսափում, քան՝ սատանայից: Եվ լրագրողի անուն լսելիս կամ լրագրող տեսնելիս փախչում է՝ առանց հետ նայելու: Այնպես որ անմիջապես, շփվող, ասող-խոսող մարդու և դեկավարի կերպար հորինելու էքսպերիմենտը ձախողվել է:

Հավատ չեն ներշնչում նաև այն պատասխանները, որ վերագրվում են նրան. շատ վաղուց նա ի վիճակի չէ հողաբաշխ նախատեսություն ասել, ամբողջական միտք արտահայտել: Եվ դա գիտեն բոլոր քաջարանցիները: Բայց դա նույնպես թողնենք «հարցազրույցը» հորինած լրագրողների ու տվյալ լրատվամիջոցի խղճին:

Հարցազրույցում Մաքսիմ Չակոբյանը խոսում է «Լեռ-Էքս» ՄՊԸ-ի մասին, իբր այնտեղ քաղաքակիրթ աշխատանք է տարվում, իբր այնտեղ նորմալ բիզնես է կազմակերպվում:

Իրականում նրան խաբել են այդ ընկերության առուվաճառքի ժամանակ, և հարգանք ու պատիվ բոլոր նրանց, ովքեր խաբել են: Հավատացե՛ք՝ Մաքսիմ Չակոբյանին խաբելն ու նրանից ինչ-որ բան պոկելն աստվածահաճո գործ է, ազգային գործ...

Բայց «Լեռ-Էքս» շուրջ Գեղիի ծորում տեղի են ունենում արտառոց

զարգացումներ: Նախ՝ շնորհիվ Մաքսիմ Չակոբյանի, տարվա մեծ մասն այլևս անօգտագործելի է Գեղի գետի ջուրը: Եվ եթե նրա փոփոխության վրա չպի չդնեն, ապա շատ շուտով Գեղիի հրաշք ծորը եւս դառնալու է բնակվելու համար անպիտան:

Միաժամանակ «Լեռ-Էքսը» դառնում է Քաջարանի կոմբինատից օրական մի քանի հազար տոննա տարվող հանքանյութը պատասխարելու վայր: Եվ դա արդեն մի քանի ամիս շարունակ...

Գիմա՝ Մաքսիմ Չակոբյանի որոշ մտքերի մասին՝ արտահայտված այդ հարցազրույցում:

Ասում է՝ «Քաջարան գյուղ չկա»: Իհարկե, հասկանալ կարելի է Մաքսիմ Չակոբյանին. մարդը փորձել է կառավարության աջակցությամբ զավթել մեր գյուղի տարածքը, վերացնել մեր հնամենի գյուղը՝ իմանալով, որ ընդերքում հարստություն կա, բայց չենք թողել: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն էլ ինձ հավատարիցրեց՝ «Չենք թողնի, որ գյուղը վերցնեն»: Եվ կոմբինատի տնօրենը մինչև այսօր չի ստանում իր պարտությունը:

Քաջարան գյուղի մասին խոսելիս, ինչպես երեւում է կրկին անգամ, Մաքսիմ Չակոբյանը կորցնում է հավասարակշռությունն ու ողջատությունը: Ասում է՝ «Քաջարանն աստիճանական գյուղ է»: Ասում է ու չի հիշում ակնհայտ ու բացահայտը՝ եթե բնության մեջ, Հայաստանում, մոլորակի վրա մի անօրինական բան

կա՝ դա ինքն է, իր պաշտոնն է, իր ունեցվածքն է:

Իհարկե, ես կարող եմ իրավական հիմնավոր փաստաթղթեր բերել և ապացուցել Քաջարան գյուղի ներկայիս կարգավիճակի օրինակառությունը: Վերջին փաստաթուղթը, ի դեպ, ՀՀ գերագույն խորհրդի նախագահության 1992թ. հուլիսի 9-ի որոշումն է, որի մեջ գրված է. «Վերականգնել Կապանի շրջանի Քաջարան գյուղը և այն մտցնել ՀՀ բնակավայրերի ցանկի մեջ»: Բայց երեւի չարժե Մաքսիմի ասածներին լուրջ վերաբերվել: Պարզապես նրան մի փոքրիկ ուղեղն է ուզում հղել:

Մաքսիմ Չակոբյան, մի օր վերջը գալու է, ես ես տեսնելու եմ այդ օրը:

Դու իրավունք չունես մարդկանց անունից, Սյունիքի անունից, Քաջարանի, անգամ Քաջարանի կոմբինատի աշխատողների անունից խոսել: Տարիներով քեզ ոչ ոք չի տեսնում, մարդիկ արդեն մոռացել են քո դեմ քը: Մեքենաներով շրջապատված քեզ երբեմն-երբեմն բերում են կոմբինատ և նույն կերպ մի քանի ժամ անց հետ տանում: Ճիշտ է, ընտրությունից-ընտրություն մի փոքր ավելի շատ ես երեւում, բայց մարդիկ քվեարկության ժամանակ քո ասածի հակառակն են անում:

Քաջարան գյուղի մասին. աչքը հետ չպահես, գյուղի տարածքը քեզ չենք տալու, գյուղապետ էլ չլինեմ՝ չենք տալու:

Եթե իմանալիք, թե ինչ ասել է հայրենի գյուղ՝ մեզ կհասկանալիք: Հայրենի գյուղը թողած՝ թուրքի Մուսալանյանն էս տունն սարբել:

Վառվում ես, որ Քաջարան գյուղը չես կարողացել զավթել, ճանապարհին տեսախցիկներ ես

դրել՝ զննող-եկողներին վերահսկելու: Քաջարան գյուղը «բլրկադաշտ» ես ենթարկել, անգամ բանակում զոհված քաջարանցու եղբորը՝ Պավելը Համբարձումյանին աշխատանքի չես ընդունում, որի միակ «մեղքը» քաջարանցի լինելն է: Եվ դեռ համարձակվում ես խոսել հայրենիքի մասին:

Դու բարոյական իրավունք չունես քաջարանցիների մասին խոսել այդպես, քաջարանցիները ձեռքիդ հաց են դրել: Որտե՞ղ էիր մինչև 1998 թվականը:

Այն տարածքները, որ հիմա բալանում ես (500հա), դարձյալ Քաջարանի Բուրյունու անվան կոլխոզի հողերն են:

Եվ այդ ամենից հետո ոչ մի քաջարանցու աշխատանքի չես ընդունում:

Գոնե հիշիր, որ Քաջարանը սահմանապահ գյուղ է, հիշիր, որ այդ կոմբինատը քաջարանցիներն են կառուցել:

Նաև հիշիր, դու մեզ պետք չես, մեզ համար դու գոյություն չունես: Իսկ եթե շարունակես հոխորտալ մեր գյուղի հասցեին, ապա ամեն անգամ պատասխան կստանաս:

Գյուղն առանց քեզ էլ, առանց քո օգնության էլ ապրում է. անասուն ենք պահում, հող ենք մշակում, տեխնիկա ենք ձեռք բերել, բարերարների օգնությամբ շուտով գյուղի ճանապարհն ենք վերակառուցելու:

Այնպես որ կարիքդ չունենք, երեսդ տեսնել չենք ուզում:

Կոչ ենք անում քեզ, ով օտարական, կշտացիր վերջապես, մոռացիր Քաջարան գյուղի անունը և մեզ հանգիստ թող...

## Լեռնաձորի համայնքին և Քրդիկանց-Լեռնաձորի սփյուռքին

### Ուղերձ

Մեզ բոլորիս մերձավոր և հեռավանգական ոգեղենությամբ միավորում է հայրենի Քրդիկանց-Լեռնաձորի փառահեղ պատմությունը, որը ներառում է մասնագրական արժեքներ, պատմավեպ, բարեհիշատակ նախնյաց հուշապատումներ, հնավանդ կառույցներ: Այս ամենը նորովի իմաստավորելու նպատակով մերօրյա համայնքն ունի նախաձեռնություններ, որոնք կյանքի կկոչվեն լեռնաձորցիներիս ու մեր բարեկամների միակամ վճռակառույցները: Մեր նախկին գյուղատեղի՝ միջնադարյան եկեղեցական շինության տեղում 17-րդ դարում կառուցված Սբ Աստվածածին եռանավ բազիլիկ եկեղեցին, որ տարածաշրջանում ամենախոշորն է, մենության մեջ հայտնվել է ամմիխթար վիճակում և հիմնարար վերանորոգման կարիք ունի:

Վերակառուցումը ստանձնել է բերեզոր-ծության համբավավոր «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն: Վերանորոգման նախագծի պատվիրատուն, բնակամբար, Լեռնաձորի համայնքն է. անհրաժեշտ է հայթայթել 3 մլն դրամ գումար: Հուսալով մեր հայրենակիցներին, համայնքային հանձնախումբը համգանակության հաշվեհամար է ամրակայել ԱՇԻԲ բանկի Քաջարանի մասնաճյուղում՝ 2473501239460000, դրամով փոխանցումների համար և Bank Ardshininvestbank Kajaran branch /swift code ASHBAM 22/ 2473501239460010, դոլարով փոխանցումների համար: Ստացող՝ Բելլա Ղազարյան / Bella Ghazaryan/: Ակնկալվում է լեռնաձորցիների, սփյուռքի և մեր բարեկամների աջակցությունը, սկսած 2 լումայից՝ հոգեբույն կամեցողությամբ, ըստ հնարավորությունների և ճանաչվածության համարվի:

**Լեռնաձորի Սբ Աստվածածին եկեղեցու վերանորոգման աշխատանքների կազմակերպման հանձնաժողով**

## Ակսել Բակունցի տուն-թանգարանը տոնեց թանգարանների միջազգային օրն ու «Թանգարանային գիշերը»



### Մշակույթ

Թանգարանների միջազգային խորհրդի (ICOM-The International Council of Museums) որոշմամբ 1977 թվականի մայիսի 18-ին ԻԿՕՄ-ի 11-րդ գլխավոր կոնֆերանսի ընթացքում, խորհրդային պատվիրակության առաջարկությամբ, մայիսի 18-ը հռչակվել է թանգարանների միջազգային օր: 1978 թվա-

կանից ամեն տարի այդ օրը նշում է աշխարհի ավելի քան 150 երկիր, այդ թվում և Հայաստանը: 1992 թվականից սկսած՝ յուրաքանչյուր տարվա այդ օրն ունի թեմա, և ԻԿՕՄ-ը հրապարակում է տվյալ թեմային առնչվող միջոցառումները:

Ամեն տարի միջոցառումն անցկացվում է Թանգարանների միջազգային օրվան մոտ շաբաթ օրը: Միջոցառումը հնարավորություն է

տալիս հասարակությանն անվճար, գիշերային միջավայրի ներքո ներգրավվել թանգարանային անցուղարձի մեջ և նորովի բացահայտել պահվող մշակութային արժեքները, հաղորդակցվել թանգարանային խորախորհուրդ նթնդրողին: Մի ամբողջ օր երեկոյից մինչև կեսգիշեր թանգարաններն այցելուներին առաջարկում են բազմապիսի միջոցառումներ, որոնք հետաքրքրություն են առաջացնում հանրության մեջ:

Մշակութային գեղեցիկ տոնից անմասն չմնաց նաև Ակսել Բակունցի տուն-թանգարանը, որ օրվա կապակցությամբ այցելուներին առաջարկեց միջոցառումների հետաքրքիր ծրագիր՝ «Օրը լցնենք ասքով, երգով» խորագրով:

Ծրագրի շրջանակում գրականագետ Թեհմինա Մարությանի ղեկավարությամբ գրական-երաժշտական ցերեկույթ էր կազմակերպել տուն-թանգարանին կից գործող «Միրհավ» գրական խմբակը: Միրհավականները ներկաների ուշադրությունը գրավեցին օրվա խորհուրդն ու նշանակությունը լուսաբանող ելույթներով, թանգարանի հիմնավորման, զարգացման հիշարժան անցքերի, հանգամանքների վկայաբերումներով, թանգարանային հուշամատյանի ու բակունցյան էջերի տպավորիչ ըմբռնումներով, երգով ու ասմունքով:

Տուն-թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանը՝ տոնի առթիվ ողջունելով ու շնորհավորելով ներկաներին, խոսեց այն բարեշահ ձեռնարկների մասին, որոնց արդյունքում թանգարանն այսօր այցելուներին է ներկայանում նորացված ցուցադրությամբ ու բարեկարգ վիճակում:

«Թանգարանային գիշեր» ակցիայի շրջանակում գրական ու երաժշտական ելույթներ էին պատրաստել նաև Ա.Բակունցի անվան N1 ավագ դպրոցի սաները՝ ուսուցչուհի Գոհար Սկրտչյանի նախաձեռնությամբ:

Տոնը հրաշալի առիթ էր եւս մեկ անգամ Ակսել Բակունց գրողի արվեստն արժեւորելու, նորից ու նորովի նրա կերպարին ու ստեղծագործությանը հաղորդակցվելու, նրանով ներշնչվելու ու վեհանալու: Առիթ էր կրկին միավորվելու հոգեւոր այն դաշտում, որ ամբողջովին ներծծված է Բակունցի շնչով, հայացքով, արեւային երկայնք, ստեղծագործ ուժով ու էներգետիկայով:

«Միրհավ» գրական խմբակ

### Մարզի գյուղեր



«Բորիսովկա» ՍՊ ընկերությունում



ԼՍՍԱՎԱՐՈՒՆԵՐԸ ՆՈՒՔԱՐ ԴԱՎԹԵԱՆԻ

# Ծղուկը՝ համայնքների խոշորացման շեմին

ՍԿԻՉԲԸ ԷՏ 1

ռով գյուղը 1,5կմ հյուսիս-արևելք է տեղափոխվել: Նախկին գյուղի տարածքը մնացել է ջրի տակ, միայն բարձունքներից մեկի վրա Մեծ հայրենական ընկած 75 համագյուղացու հիշատակը հավերժացնող հուշարձան է մնացել, որպես հուշ ու վկա հնօրյա Բորիսովկայի: Բորիսովկայում են աչք բացել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիշա Ղարիբյանը, քանդակագործ Գետիկ Բաղդասարյանը, գյուղի կոլեկտիվ տնտեսությունը հնուտ վարելու են հացահատիկային մշակաբույսերի բարձր բերք ստանալու համար Սամվել Ավետիսյանն արժանացել է սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման (1947 թվական):

Համայնքապետ Մերոպ Ամիրջանյանը եւ գյուղատնտեսի (ավարտել է գյուղմեխանիզացիայի ու էլեկտրիֆիկացիայի տեխնիկումը), եւ մանկավարժական (Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետ) կրթություն ունի: Գյուղի կոլեկտիվ տնտեսությունն է ղեկավարել, նաեւ հայրենի Ծղուկի, ապա՝ հարեւան Բազարչայի կրթօջախների տնօրեն է եղել: Խորհրդատեսության տնօրեն է եղել, ապա երեք գյուղի (Բորիսովկա, Ծղուկ, Սառնակունք) գյուղխորհրդի նախագահ, 1991-ին երբ գյուղերը բաժանվեցին, Ծղուկի գյուղխորհրդի նախագահ՝ մինչեւ 1996 թվականը: Մարզի տարեց գյուղապետերից է: Պատմում է, որ 1905-06 թվականների հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, երբ Ղալաջուղ գյուղը բազմիցս ենթարկվեց հարձակումների, բնակիչների մի մասը տեղափոխվեց եւ բնակություն հաստատեց այստեղ: Երեւույթը կրկնվեց նաեւ 1918-20 թվականներին: Բնակչության մի մասն էլ ավելի վաղ ներգաղթել է այստեղ Խոյ-Սալմաստից, հավանաբար Թուրքմենչայի պայմանագրից հետո: Բորիսովկա եկան նաեւ բնակիչներ՝ Սիսիանի



Ծղուկի միջնակարգ դպրոցը

մյուս գյուղերից: «Մի խոսքով հավաքովի գյուղ է», - թեման այսպես է եզրափակում գրուցակիցս: Բազմանդամ եւ սակավ ապահով ընտանիքում է հասակ առել: Երբ սկսվեց երկրորդ աշխարհամարտը, հայրը մեկնեց ռազմաճակատ: Հորը չի տեսել, որովհետեւ Ուկրաինայի համար մղված մարտերից մեկի ժամանակ զվարդիայի ավագ լեյտենանտ Սուրեն Ամիրջանյանը 1943 թվականին զոհվել է: Տարիներ հետո հարազատներով այցելել են զոհվածի գերեզմանը, այդտեղից մի բուն հող բերել, շաղ տվել իրենց ընտանեկան գերեզմանոցում: Մայրը միայնակ է դաստիարակել եւ վաստակի տեր դարձրել երեք որդուն եւ երեք դստերը...

### Աղքատի ձեռքը փող է ընկնում, չգիտի՝ ինչ անի

Ինչպես մարզի մյուս գյուղական համայնքներում, Ծղուկում եւս

բազում խնդիրներ կան՝ հրատապ լուծում պահանջող: Դրանց ցանկը հաստատվել է համայնքի ավագանու անցյալ տարվա մարտի 3-ի նիստում: Առաջնային են մշակույթի տան եւ գյուղապետարանի մասնաշենքերի հիմնանորոգումն ու գույքի ձեռքբերումը, փողոցային լուսավորության անցկացումը, խմելու ջրի աղբյուրների ակունքների ավազանների նորոգումը, ջրահեռացման նպատակով առումների մեջ կիսախողովակների տեղադրումը եւ այլն: Ծղուկը ոռոգման ջուր ստանում է Սպանդարյանի ջրանցքից, 1,800մ երկարությամբ խողովակով հասնում է գյուղի սկիզբը, մի ճյուղը խողովակով հասնում է այգիներին, երկրորդ ճյուղի ջուրը սովորական առվով է հասնում, ուստի անպակաս են լինում կորուստները: Օրակարգում է ոռոգման ցանցի երկրորդ գծի անցկացումը, որից կօգտվի 15 ընտանիք: Համայնքի հիմնախնդիրների ցանկում ներառված է նաեւ կոյուղու նորոգում երեք հատվածում:

Այս մեկը կատարվում է պետական ծրագրի շրջանակում, որի նախագծամատակարարի փաստաթղթերն արդեն պատրաստ են: Որոտանի հեկտրի համակարգի գույքի առջուկաճառքից հետո Ծղուկ համայնքին 20 մլն դրամ են հատկացրել, բայց հիմնախնդիրներն այնքան շատ են, որ չգիտեն գումարը որտեղ ծախսել, որ հարցի լուծումից սկսել: Եվ համայնքապետը ստեղծված վիճակն այսպես է ներկայացնում՝ արքատի ձեռքը փող է ընկնում, չգիտի՝ ինչ անի:

Առավել հուսադրողն այն է, որ սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով եւ Սյունիքի մարզպետարանի ու Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի օժանդակությամբ հիմնանորոգվել է գյուղի դպրոցի մասնաշենքը: Գյուղապետի փոխանցմամբ հոյակապ աշխատանք է արվել. նոր գույքը տեղափոխվել է, մնում է հիմնանորոգված մասնաշենքի բացումն անեն: Հրճաբաց նաեւ տեղեկացանք, որ գյուղի դպրոցը 43 աշակերտ ունի, այս ուստարում վեց շրջանավարտ է ունեցել համայնքի կրթօջախը:

### Խոշորի իրացումը պատահական մարդկանց ձեռքին է

Ծղուկում տավարի եւ ոչխարի մսի իրացման լուրջ խնդիր կա: Ծիշտ է, երեք տարի առաջ մանր եղջերավորի մսի իրացումը որոշ աշխուժացում ապրեց, բայց դա ժամանակավոր էր: Այժմ երբեմն եզրիներն են գյուղում լինում, նրանք էլ հիմնականում գառ են պահանջում դրա փոխարեն, ասենք, կահույք առաջարկելով (հսկը՝ քարանձավային ապրանքափոխանակություն): Սա դեռ ամենը չէ, գյուղացին չի կարողանում ոչ մորթված անասունի կաշին իրացնել, ոչ էլ բուրդը: Վերջինս պարզապես շարուն են փշերի վրա եւ այրում: «Եթե միայն կաթի իրացման տարրական չափով միսն իրացվի, գոհ կլինենք», - ասում է գյուղապետը: Շահավետ չէ ոչխարը Կապանում գտնվող սպանդանոց տեղափոխելը, որովհետեւ կենդանուն այդքան հեռավորություն տեղափոխելով՝ քաշի կորուստ է լինում: Իսկ տավարի միսը տեղում իրացնելով եւ անասնատերը քիչ բան է շահում, մեծ լռեցու ձեւակերպմամբ՝ գյուղացին դառն դատում, դատարկ մտնում է...



Մյասնիկ Գրիգորյան «Բորիսովկա» ՍՊ ընկերության հիմնադիր եւ գործադիր տնօրեն

Իսկ արանքում միջնորդն է շահում: Գյուղում հաշվվում է 1140 խոշոր եղջերավոր, որից՝ 432 կթու, 1272 մանր եղջերավոր, նախկինում 500 գլուխ էր: Տարիներ առաջ ծղուկեցին մեկ-երկու կով էր պահում, հիմա մարդիկ կան, ովքեր մինչեւ 20 գլուխ խոշոր են աճեցնում: Այս թվերը պատահաբար չեն ձեռք բերում մսի իրացման խնդիրն առաջին պլան է մղվում: Լուծումն անասնապահական տարածաշրջանի համարում ունեցող (եւ այդպիսին էլ կա) Սիսիանում «մի մի» սպանդանոցի հիմնումն է: Բայց ո՞վ կծեռնարկի այդ գործը...

Ի դեպ, 2009-ին Ծղուկում բրուցեյրոգի համաճարակ էր բռնկվել, որից մեծապես տուժել էր խոշոր եղջերավոր անասունների զխաբանակը, ավելի ստույգ՝ 707 գլուխ խոշոր եղջերավորի կորուստ էր եղել: «Սյունյաց երկրին» հետաքրքրում էր, թե գյուղացին պետությունից փոխհատուցում ստացել է համաճարակից անկած անասունի դիմաց: Մեզ հայտնեցին, որ նախապես պետությունը 30 մլն դրամ փոխհատուցում էր խոստացել, բայց հատկացրեց 12 մլն դրամ, ստացվեց յուրաքանչյուր կովի դիմաց՝ 17 հազար դրամ: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Միայն հուսադրողն այն է, որ բրուցեյրոգի համաճարակից հետո անասնազխաբանակը վերականգնվել է համայնքում, վերացվել է ՇՈՒՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՅ 7

Վարկած

# Որտե՞ղ է թաղված Գրիգոր Նարեկացին



ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ

**10-րդ դարում Նորից սկսվում են դավանաբանական վեճերը հայ եկեղեցու բարձրաստիճանի հոգևորականության միջև՝ մի կողմից պահպանողական հայրերի՝ ի դեմս հայոց կաթողիկոսի և Նրա կողմակիցների, մյուս կողմից՝ նահանգական հոգևոր առաջնորդների:**

Սեզ հետաքրքրող ժամանակաշրջանում միասնական ճակատ էին կազմել Սյունիքի, Վասպուրականի և Աղվանքի հոգևոր այրերը՝ համծիրնս Վահան Եպիսկոպոսի՝ Սյունյաց գահակալ Չագիկի թոռան, Ջեանշեր իշխանի որդու, Վասպուրականի Անձեացյաց Եպիսկոպոս Խոսրովի՝ Գրիգոր Նարեկացու հոր, ով իբրև հերձվածող բանադրված էր Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից(1) և Աղվանից կաթողիկոսներ Սահակի, ապա նաև Գագիկի մասնակցությամբ, ովքեր ձգտում էին բարեփոխումներ կատարել հայ առաքելական եկեղեցու իրավական-նորմական համակարգում: Նրանց դեմ անհաշտ պայքար էր մղում ժամանակի խորաթափանց կաթողիկոս Անանիա Մոկացին(1):

Ահա այս խառնակ ժամանակաշրջանն էր, երբ հանդես եկավ մեր համճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին (950-1003), ում սկսեցին հալածանքի ենթարկել(2) նրա մղած «հանդուգն և նորաշունչ» գաղափարների համար(3):

«Չափազանց բանազետ...»(4) և «Աստուածօժիմաստ բանահյուս» պոետի գրական ժառանգության մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ:

Սույն հոդվածի հիմնական աղբյուրը եղել է 1839թ. Պոլսո Օրթոգոսի Արաբյան եղբայրների տպարանում լույս տեսած «Յիշատակ վարդուց հոգեկիր հռետորի սրբոյն Գրիգորի Նարեկ աղօթից» կամ «Մատեան ողբերգութեան» գրքի հակիրճ հիշատակարանը: Այստեղ ի թիվս պատմական մի շարք գործիչների (Վասիլ, Կոստանդին կայսրեր, Սեմեթերիմ Արծրունի թագավոր), նաև նշվում է, որ Գրիգոր Նարեկացին իր «Մատյանը» շարադրել է «ի հայրապետութեան տեսան Վահանայ կաթողիկոսի», հայոց :ՆԼԲ: (983) թվականին (5):

Այս փաստը մտորելու տեղիք է տալիս: Ինչպես հայտնի է, կաթողիկոս Վահան Ա Սյունեցին վախճանվել է 972թ.(6), բայց ոչ 983թ., ինչպես գրված է Մատյանի մի խումբ հիշատակարաններում (7):

Սեծանուն Սյունեցին հողին է հանձնվել Վասպուրականի Տոսպ

գավառի Չորո վանքում (8): Նույն ճակատագիրն է ունեցել Վահան Ջեանշերյանին նախորդած Չակոբ Ա Սյունյաց շինարար Եպիսկոպոսը (9), ում Անանիա Մոկացին բնութագրում է նվաստացուցիչ պիտակներով՝ անվանելով «սաղիչ», «խաբող», «ապերախտ», «չարաբարո» և այլ բառերով (10): Սակայն հետևեցին Վահանին:

Պատմական աղբյուրները վկայում են, որ Վահան Սյունեցու կաթողիկոսությունն ընդհատվեց նրանով, որ Անիի եկեղեցական ժողովը, որին Վահանը չմասնակցեց, Աշոտ Ողորմած թագավորի համաձայնությամբ որոշեց գահընկեց անել նրան՝ մեղադրելով քաղկեդոնականությանը հարելու մեջ(11):

Ժամանակագիր Դավիթ



ՆՈՒՍԱՎԱՐԸ ՆՈՐԻՑ ԴԱՎԵՍԻՐ

Բաղիչեցու հիշատակարանում կարդում ենք. «Ետ Անանիայի եկաց հայրապետ Տեր Վահան ի Բաղայ (ինս՝ Բաղաց) ամ մի որդի Ջուանշիրի իշխանին Բաղաց: Նա դաշնադիր եղև ընդ վրաց քաղկեդոնականաց և իմացեալ վարդապետք ժամանակին և հալածեցին զնա և նա փախտեամբ եկեալ ի Վասպուրական»(12):

Միջնադարյան պատմիչներից շատերը դրվատանքի ջերմ խոսքերով են արտահայտվում կաթողիկոս Վահան Ա Սյունեցու մասին: «Յայսմաւուրընում» նշվում է. «Վահան էր ուղղափառ և իմաստուն հայրապետ Չայոց ի Բաղաց գաւառէ, զոր փախտական արարին վասն կարծեաց դաւանութեան ժողովոյն Քաղկեդոնի և վասն պատկերս մուծելոյ յեկեղեցիս և զսեղանն սուրբ: Իսկ նորայ երթեալ տիրեաց ի կողմանս Վասպուրականին և յայն սակս կաթողիկոսութիւն Չայոց բաժանեցաւ յերկուս: Եւ էր յայն ժամ Վահանայ համախոհ հրեշտակն ի մարմնի սուրբն Գրիգոր Նարեկացին»(13):

Եթե «Մատյանը» գրվել է Վահան Սյունեցու հայրապետության շրջանում, ապա Գրիգոր Նարեկացին եղել է ընդամենը 20-22 տարեկան :

Համճարեղ բանաստեղծը մահացել է հայոց :ԳԾԾԲ: (352+ 551) 903 թվականին և թաղվել է Նարեկա վանքում, իսկ երբ Վասպուրականի Սեմեթերիմ թագավորը 1021թ. երկիրը փոխանակեց Բյուզանդիայի հետ

և տեղափոխվեց Սեբաստիա, ահա այդ ժամանակ «միանձանցն Նարեկայ դիմեալ մերձ ի կողմանս քաղաքին Ակնայ և Տիրիկեայ (Տերիկ) շինեցին վանս յանուն Նարեկայ, ուր բերեալ հանգուցին զպատուական մարմինն, թեև այժմ է աւերակ և կոչի Ուխտ Արակայ» (14):

Այժմ համառոտակի անդրադառնանք Ակն և Տիրիկե քաղաքների տեղադրության խնդրին: Ակնը գտնվում է Փոքր և Մեծ Չայքերի միջակա սահմաններում: Հիմնադրել են Սեբաստիա տեղափոխված Արծրունիները(15): Թուրքերը կոչում էին Էգին, ապա վերանվանել են Քեմալիե (16): Գտնվում է Արեւմտյան Եփրատի աջ ափին՝ Երզնկայից հարբերող տանող ճանապարհին, իսկ անցյալում եղել է Բաբերդի վիլայեթի կազմում:

նալյան և այլք) նշում են Նարեկացու մահվան տարբեր թվականներ (27):

Սույն հոդվածի հիմնական նպատակն է բացահայտել, թե ի վերջո որտե՞ղ է թաղված Գրիգոր Նարեկացին, որտե՞ղ են հանգչում նրա սրբազան մասունքները:

Վերը նշեցինք, որ Գրիգոր Նարեկացու մարմինը երկրորդ անգամ հողին է հանձնվել Ակնում, որ գտնվել է «ի Կիլիկցոց աշխարհիս» և Տյուրիկե («Տիվրիկո գաւառ»+ Տերիկ) քաղաքների մերձակայքում, ուր ճգնավոր անձինք հիմնադրել են նոր Նարեկա վանք՝ կոչելով Ուխտ Արակա(28), որը դարձյալ ավերակվել է, իսկ մեծանուն բանաստեղծի աճյունը տեղափոխել են մեկ այլ տեղ, որի ստույգ անունը և տեղադրությունը մեզ դեռևս հայտնի չեն:

2012 թ.ամռանը Կապանի հնագիտական արշավախմբի անդամներ Հրաչիկ Մարգարյանի, ճարտարապետ Համլետ Մարտիրոսյանի և այլոց հետ միասին շրջազայելով Վահանավանքի Մեծ տաճարի՝ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավարևմտյան անտառախիտ սարավանդում, նկատեցինք մարդկային կերպարանքով տապանաքար / երկ. 1 մետր 10 սմ, լայն. վերելից՝ 45-48 սմ, ներքեից 56 սմ, բարձր. 61 սմ/: Տապանաքարի աջակողմում կա եղծված և մաշված փակագրի տառահետքեր, որոնց հիման վրա կարելի է ընթերցել ՆԱՐ...Ե.../4/ կապակցությունը:

Պ ա տ կ ե - ր ա ք ա ն դ ա կ ն ակամայից հիշեցնում է մեծ ա տ ա դ ա ն դ գ ե դ ա ն կ ր ի չ Գրիգոր Սկեռաջու (Մլիճեցու) 1173 թ. (Մատենադարանի նո. 1568) ձեռագիր մատյանի մանրակարգ՝ գանգրահեր տղամարդ, ոչ երկար գլխամագերով, փոքր-ինչ ուռուցիկ իրանով: Տապանաքարը պատրաստված է միակտուր քարից, միաձուլ պատվանդանով: Շուրջառը ծածկում է ողջ իրանը, որի կողքերից երևում են ձեռքերի դաստակները: Ողբերը տեսանելի չեն, քանզի ծակոտեցներով պատված մարմնի ներքին մասերը ճաքճաքված են և քայքայված:

Արդեն նշել ենք, որ օտար ներխուժողների շրջանում Գրիգոր Նարեկացու մարմինը տեղափոխել են տեղից տեղ:

Կարծում ենք՝ Գրիգոր Նարեկացու վերջին հանգրվանը եղել է Սյունյաց աշխարհը: Սյունիքն այդ ժամանակ ուներ կայուն թագավորություն՝ Վասակ Ա թագավորի գլխավորությամբ (նա թաղված է Տաթևի վանքում): Նրա դուստր Կատրանիդեն ամուսնացած էր Բագրատունյաց Գագիկ Ա իզոր թագավորի (990-1020) հետ (29):

Այս երկու խոշոր ավատական տների ազգակցական կապերն առավել սերտացնում և ապահովում էին նրանց միջավատական հարաբերություններն ու ռազմա-քաղաքական դաշինքը:

Ուզում ենք հավատալ, որ Գրիգոր Նարեկացուն տեղափոխել են իր հոր՝ Խոսրով Անձեացյաց Եպիսկոպոսի գաղափարական դաշնակից Վահան Սյունեցու հայրենիքը՝ Սյունյաց լեռնաշխարհ, և ամփոփել Սյունիքի արքունական իշխանական դամբարանատան՝ Վահանավանքի տարածքում :

Պատմությունն ինչ-որ տեղ կրկնվում է. չէ որ Վահան Սյունեցի կաթողիկոսն էլ իր հանգիստն է գտել Վասպուրականի Չորո վանքում և ոչ իր հայրենի Սյունյաց նահանգում:

ՇԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես Գիրք թղթոց... տես նաև Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլուխ ԾԱ, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861 էջ 202:
2. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, էջ 359 :
3. Նույն տեղում, էջ 357, տես նաև՝ Մանուկ Աբեղյան:
4. Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնը, Վենետիկ, 1840 և այլն:
5. Արիստակես Լաստիվերցու արտահայտությունն է (տես Պատմութիւն, Երևան, 1971, էջ 5, ծանոթ. 27): Երկեր, հ. 9, Երևան, 1968, էջ 581:
6. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, աշխատասիրությամբ Պ.Խաչատրյանի և Ա.Ղազինյանի, Երևան, 1998, էջ 175:
7. Մատենա ողբերգութեան, Կ.Պոլիս, 1839, էջ 345:
8. Տես Գր.Գրիգորյան, Վահանավանք, Երևան, 2007, էջ 11-13:
9. Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, Մ., 1861, էջ 199-206:
10. Տես Գալուստ Տեր-Սկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, աշխատասիրությամբ պրոֆ. Պ.Հակոբյանի, Էջմիածին, 1998, էջեր 98, 99, , 100, 105 և այլն:
11. Մանր ժամանակագրություններ, հ.2, կազմեց Վ.Հակոբյան, Երևան, 1956, էջ 338:
12. «Յայսմաւուրք, մայիսի 27, նաև Բազիլիք Հայկազեան լեզուի, Բառարան յատուկ անուանց, որք գտանին յայլեայլ գիրս արտաքոյ Աստուածաշունչ գրոց, Վենետիկ, 1769, էջ 352:
13. Տես Տեսնոն Անանիայի Հայոց կաթողիկոսի Պատմառ յաղագս գիտարով նշովելոյն զԱնձեացվոց Եպիսկոպոս Գալուստ Տեր Սկրտչեան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, աշխատասիրությամբ պրոֆ Պ.Հակոբյանի, Էջմիածին, 1998, էջ 124-125:
14. Թ.Հակոբյան, Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, էջ 30-31:
15. Մատենա ողբերգութեան, 1839, էջ 346:
16. Տես Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 224-225:
17. Տես Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 136:
18. Նույն տեղում: Տես նաև «Ակնի Նարեկյան վարժարանը»: Տես նաև «Հնութիւնը Ակնայ» ժողովածուն, Թիֆլիս, 1895, էջ 137:
19. Մատենա ողբերգութեան, 1839, էջ 386:
20. ԺԴ, էջ 97:
21. Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. 9, Երևան, 1968, էջ 58:
22. Մ.Չամչյան, Հայոց պատմություն. Բ հատոր, էջ 857:
23. Մանուկ Աբեղյան, նույն տեղում:
24. Թ.Հակոբյան, նշվ. աշխ., էջ 34:
25. Ջարբիհանյան-մի... էջ 88:
26. ԺԴ, էջ 88:
27. Տես Լ.Խաչիկյան, ԺԴ դարի ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 369:
28. Դիվան հայ վիմագրության, պրակ 1, Երևան, 1982, էջ 35:
29. Մատենա ողբերգութեան, 1839, էջ 346:

## Սյունիքը 1-ին աշխարհամարտում. 1914-1918թթ.

1-ԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ
ԶՈՐԿԱԾ ԵՎ ԱՆՅԵՏ ԿՈՐԱԾ
ԱՅՈՒՆԵՑԻՆԵՐԸ /ԸՍՏ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ/

ՍԿԻՁԲԸ` N 10 (318)

1.	Մարտիրոսյան Եղիշե Յովսեփի	1921
2.	Մարտիրոսյան Եփրեմ Յովսեփի	1918
3.	Մարտիրոսյան Արտեմ Յովսեփի	1917
4.	Մարտիրոսյան Թեւան Յովսեփի	1918
5.	Հայրապետյան Թոմաս Մարկոսի	1917
6.	Հարությունյան Սավադ Առաքելի	1918
7.	Սահակյան Վարդան Հակոբի	1918
8.	Բաբայան Մանուչար Սմբատի	1919
9.	Յովսեփյան Համբարձում Եփրեմի	1917
10.	Ստեփանյան Ջաքարի	1916
11.	Պողոսյան Նիկողայ	1917

##### ԲԵՆ

1.	Դավթյան Մարտիրոս Կարապետի	1913
2.	Փարսադանյան Ռուբեն Ջաքայելի	1921
3.	Գրիգորյան Գրիգոր Օվիյի	1914
4.	Փարսադանյան Ավանես Միքայելի	1919

##### ՄՈՂԵՍ

1.	Հարություն	1917
2.	Սաֆարյան Իվան Ալլահվերդիի	1917
3.	Օհանջանյան Հոսեփ Աբրահամի	1918
4.	Ալավերդյան Ալլահվերդի Օհանի	1918
5.	Թամրազյան Վագ. Մարտիրոսի	1916
6.	Պետրոսյան Սերգեյ Աղաջանի	1916
7.	Բարխուդարյան Համբարձում Առստամի	1914
8.	Փարամազյան Հակոբ Միրզայի	1914
9.	Պետրոսյան Վանես Մանասի	192.
10.	Օհանջանյան Բախշի Ավան...	1919
11.	Օհանջանյան Հայրապետ Օհանջանի	1920
12.	Պետրոսյան Մարտիրոս Կարապետի	1919
13.	Փարամազյան Գալուստ Բադալի	1919

##### ՎԱՋԱԿԱՆ

1.	Օրբեյան Գուրգեն Ասրիի	1918
2.	Օրբեյան Ազարյա Ասրիի	1918
3.	Ղազարյան Ավետիս Բախշիի	1918
4.	Վեզիրյան Բենիամին Միրզայի	1914
5.	Հակոբյան Մարգարա Սկրտիչի	1915
6.	Վեզիրյան Ենոք Ալեքսանդրի	1917
7.	Գեւորգյան Ենոք Գալուստի	1918
8.	Գեւորգյան Մեսրոպ Ակոբջանի	1920
9.	Հարությունյան Ֆեոդր Մարտիրոսի	1914
10.	Խաչատրյան Հաթան Պետրոսի	1915
11.	Հակոբյան Շամխալ Մինասի	1916
12.	Ղոնյան Սավադ Կարապետի	1915
13.	Օրբեյան Ավետիս Բախշիի	1916
14.	Օրբեյան Գեղեն Մաթեոսի	1918
15.	Դավթյան Գաբրիել Ղուկասի	1916
16.	Հակոբյան Թադեոս Սահակի	1920
17.	Աղավեյան Եղիշե Մարգարի	1918

##### ՓՈՒՄՐՈՒՏ

1.	Ավանեսյան Մաղաքի Համբարձումի	1915
2.	Սկրտչյան Դավիթ Խաչատուրի	1915
3.	Գրիգորյան Անդրեաս Համբարձումի	1915
4.	Սկրտչյան Սամսոն Հայրապետի	1916

5.	Գրիգորյան Ավագ Գեւորգի	1916
6.	Հարությունյան Լազար Ավետիսի	1916
7.	Սկրտչյան Խոսրով Թաթեոսի	1915

##### ՇԱԿ

1.	Մարտիրոսան Դավիթ Սիմոնի	1916
2.	Մարգարյան Սամսոն Հակոբի	1916
3.	Գալուստյան Լեւոն Աղազյուլի	1916
4.	Դանիելյան Աբրահամ Գրիգորի	1916
5.	Խաչատրյան Ռուբեն Արշակի	1919
6.	Մնացականյան Բաբաջան Մնացականի	1919
7.	Մնացականյան Գաբրիել Մնացականի	1919
8.	Հովհաննեսյան Գրիգոր Խաչատուրի	1917
9.	Պետրոսյան Վահան Մելքումի	1920
10.	Հարությունյան Արտեմ Գեւորգի	1917
11.	Եփրեմյան Գեւորգ	1919
12.	Գեւորգյան Թավադի Թաթեոսի	1917
13.	Հայրապետյան Հարություն Սահակի	1916
14.	Ղազարյան Կինոս Խաչատուրի	1915
15.	Եփրեմյան Տիգրան Գեւորգի	1921

##### ԱՋԻԼԼՈՒ

1.	Նյութիել Հաջի Քալբալի օղլի	1919
2.	Ասկարով Նամագ Շիրխան օղլի	1918
3.	Մամեթով Մահիշ Ասադ օղլի	1918
4.	Ալիյեվ Նադիր Նարի օղլի	1918
5.	Հասանով Ամալ Հասան օղլի	1918
6.	Ջաֆարով Հասան Դաջի օղլի	1918
7.	Հուսեյիմով Թաիրեւերդի	1918
8.	Հուսեյիմով Սուլթան Դուլի օղլի	1918
9.	Մուսաֆայել Մուստաֆա	1918
10.	Մամադով Ռասուլ Ֆանահ օղլի	1918
11.	Ջաֆարով Սուլեյման Հաջիմ օղլի	1917
12.	Սաֆարով Մուստաֆա Մահմուդ օղլի	1919

##### ԳՅՈՒՏԿՈՒՄ

1.	Ավազյան Գաբրիել Դավիթի	1918
2.	Ավազյան Արսեն Դավիթի	1917
3.	Բալասանյան Արտեմ ...	1917
4.	Պետրոսյան Արտեմ Վարդանի	1917
5.	Հայրապետյան Սարգիս Հարությունի	1917
6.	Հարությունյան Մուխան Մարգարի	1917
7.	Առաքելյան Ազարյա Գրիգորի	1916
8.	Սաֆարյան Արիստակես Աղջայի	1916
9.	Ավանեսյան Մուխան Վարդազարի	1916
10.	Կոստանդյան Արամ Կոստանդի	1918
11.	Խալափյան Վարդան Ավետիսի	1918
12.	Տեր-Կոստանդյան Մովսես Ավետիսի	1918
13.	Հարությունյան Բախշի Մարգարի	192.
14.	Խալափյան Թեւան Բալաջայի	192.
15.	Սարգսյան Գերասիմ Թոթանի	1919
16.	Հարությունյան Աթանես Ակոբջանի	1920
17.	Ավազյան Վահան Ղեւոնդի	1919

##### ՋԵՅՎԱ

1.	Մովսեսյան Լեւոն Սարգսի	1918
2.	Սարգսյան Յովսեփ Հարությունի	1918

##### ՇԻՇԿԵՐՏ

1.	Խաչատրյան Ավանես Սագիսի	1916
2.	Դավթյան Սարգիս Դավիթի	1916
3.	Հարությունյան Ղեւոնդ Աղայի	1916
4.	Նիկողոսյան Կինոս Մարգարի	1915
5.	Նիկողոսյան Գրիգոր Մարգարի	1919
6.	Ալավերդյան Խոսրով Մեսրոպի	1917
7.	Հովհաննեսյան Հովհաննես Խաչատուրի	1918
8.	Գեւորգյան Հակոբ Հովհաննեսի	1916
9.	Գալուստյան Թոմաս Գալուստի	1916
10.	Միրզայան Մաթեոս Ստեփանի	1917
11.	Հախվերդյան Մաթեոս Թամրագի	1917

12.	Մարտիրոսյան Գեւորգ Ստեփանի	1918
13.	Մինասյան Ավագ Արզումանի	1917
14.	Գրիգորյան Գարեգին Հարությունի	1918
15.	Հովհաննիսան Ավետիս Բադալի	1917
16.	Հախվերդյան Պողոս Բալայի	1918

##### ԵՂՎԱՐԴ

1.	Մաքյան Վահան Նիկալայի	1921
2.	Գալուստյան Սամսոն	1921
3.	Մեծլումյան Դավիթ	1921
4.	Թամրազյան Համբարձում	1921
5.	Ոսկանյան Ավետիս	1921

##### ԱՈՍՋԱԶՈՐ

1.	Մարգարյան Իվան Անտոնի	1918
2.	Խաչատրյան Եփրեմ Ավետիսի	1918
3.	Ահարոնյան Ահարոն Ղուկասի	1917
4.	Գրիգորյան Սահակ Մովսեսի	1920
5.	Համբարձումյան Արշակ Գրիգորի	1917
6.	Մարտիրոսյան Արամ Սանթուրի	1917
7.	Խաչատրյան Ավանես Գեւորգի	1917
8.	Սարգսյան Համագ Հարությունի	1916
9.	Ահարոնյան Դավիթ Բախշչիի	1918
10.	Ահարոնյան Արշակ Ղուկասի	1917
11.	Առաքելյան Վաղարշակ Հարությունի	1916
12.	Շահնագարյան Արսեն Սողոմոնի	1918
13.	Շահնագարյան Իսակ Գալուստի	1914
14.	Գեւորգյան Սմբատ Անդրեասի	1916
15.	Հովակիմյան Դավիթ Սարգիսի	1915
16.	Թումանյան Սահակ Գեւորգի	1918
17.	Գալստյան Ռուբեն Ստեփանի	1918
18.	Թումանյան Մաթեոս Թումանի	1919
19.	Արզումանյան Մինաս	1919
20.	Սահակյան Ալեքսան Գրիգորի	1920
21.	Մարտիրոսյան Հարություն Սահակի	1919
22.	Մարտիրոսյան Սամսոն Գրիգորի	1915
23.	Մարտիրոսյան Խիկար Գրիգորի	1919
24.	Դավթյան Սամսոն Դավիթի	1915
25.	Դիլանյան Մարտիրոս Սարգիսի	1920
26.	Կարապետյան Ղազար Գաղիի	1920
27.	Պետրոսյան Դավիթ Գրիգորի	1917
28.	Սարգսյան Սամսոն Գրիգորի	1915
29.	Դիլանյան Գեւորգ Բախշչիի	1916
30.	Մինասյան Սուրեն Թամրագի	1919

##### ՆԵՐՔԻՆ ՀԱՆԻ

1.	Համբարձումյան Արշակ Սկրտիչի	1917
2.	Աբրահամյան Առստան Հայրապետի	1916
3.	Աբրահամյան Գրիգոր Ղազարի	1916
4.	Գեւորգյան Վարդազար Սարգիսի	1916
5.	Հարությունյան Ներսես Միրզայի	1916
6.	Սարգիսյան Սերոբ Միրզայի	1916
7.	Հարությունյան Հարություն Բադալի	1922
8.	Գրիգորյան Վարդան Հայրապետի	1922
9.	Մարգարյան Կոստանդ Խաչատուրի	1915

##### ԱՐՇՎԱՆԻԿ

1.	Անդրեսյան Կարապետ Ավագի	1922
2.	Հովակիմյան Ուսուբ Միկիչի	1922
3.	Առստամյան Խաչատուր	1920

##### ՆՈՐԱՇԵՆԻԿ

1.	Համբարձումյան Յովսեփ Պողոսի	1914
2.	Համբարձումյան Վանես Պողոսի	1918
3.	Ղազարյան Արտաշես Մարտիրոսի	1918

##### ՍԱՅԲԱԼՈՒ

1.	Ֆրանգյուլյան Բախշի Բեզլարի	1919
2.	Սկրտչյան Ալեքսան Մնացականի	1922

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

## Ծղուկը՝ համայնքների խոշորացման շեմին

##### Մարզի գյուղեր

ՍԿԻՁԲԸ էՋ 5

համաճարակի օջախը։ «**Ինը նախիր է առավոտյան արոտ դուրս գալիս**», – տեղեկացնում է գյուղապետը։

Գյուղմթերքների արտադրության ոլորտում մեզ հայտնած նորությունն այն էր, որ 2012-ի վերջին ստեղծվել է «Ծղուկ համայնքի արոտ օգտագործողների միավորում» արտադրական կոոպերատիվը։ Դա մի ծրագիր է, որի շրջանակում համայնքը ձեռք է բերել յոթ անուն գյուղտեխնիկա՝ տրակտոր, խոտհմծիչ, գութան, խոտի մամլիչ հարմարանք եւ այլն։ Բացի այդ՝ նույն ծրագրով անցյալ տարի գյուղից հինգ կիլոմետր հեռավորության վրա գտնվող արոտներում ջրխմոցներ են տեղադրվել։

«Բորիսովկան» հույսի շող է

Եթե տավարի եւ ոչխարի մսի իրացումը խնդրահարույց է, ավելի ստույգ՝ դրա ճանապարհին բազմաթիվ խոչ ու խոթեր կան, ապա անասնապահական մյուս մթերքը՝ կաթը, տեղում է իրացվում։ Ծղուկում 2006 թվականից գործում է կաթնամթերքների արտադրության «Բորիսովկա» ՍՊ ընկերությունը (հիմնադիր եւ գործադիր տնօրեն Մյասնիկ Գրիգորյան)։ Սկզբնական շրջանում ֆերմերներից յոթն էր իր արտադրած կաթը համծնում ընկերությանը, այժմ 120 ֆերմեր՝ չորս գյուղից։ Կաթն ընդունվում է 150 դրամով, 3,6 բազիսային յուղայնությամբ, տեղում լաբորատոր ժամանակակից սարքավորումներով ստուգվում են ընդունվող ապրանքի այլ բաղադրիչներ՝ թթվայնություն եւ այլն։ Ընկերության տնօրենը մեր հարցադրումը կանխում է, ասելով. «**Կաթնամթերքի վերամշակման դաշտը մրցակցային է, միայն արդար ու խելացի աշխատելով է ինչ-որ բան ստացվում։ Այս երկրում հեշտ բան չկա։ Հիմնականում ինչ արվել է, վարկային միջոցներով է իրականացվել։ Արտադրամասն ընդլայնվում է նույնպես վարկային միջոցներով։ Աշխատանքի եւ պատրաստի արտադրանքի պահեստավորման (խոսքը սառնարանային տնտեսության մասին է - Վ. Օ.) ավելի լավ պայմաններ կունենանք»։ Ասավծին ավելացնենք, որ «Բորիսովկան» համագործակցում է «Ազոդբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի հետ (Քարդ)։ Իսկ կադրերի պատրաստման խնդրում օժանդակություն է արվում «Վորլդ վիժն» կազմակերպության սփսիանյան կառույցի կողմից։**

«Բորիսովկայում» 12 հոգի է աշխատում, արտադրվում է յոթ տեսակի պանիր եւ կաթնային սերուցք, որն իրացվում է մայրաքաղաքի սուպերմարկետներում, քիչ քանակությամբ՝ Գյումրիում եւ Արցախում։ Հիմնական իրացման շուկան Երեւանն է, բայց ծրագրեր կան սփսիանյան կաթնամթերքը Ռուսաստան արտահանելու։ Փաստաթղթեր են ներկայացրել նաեւ թույտվություն ստանալու ընկերության արտադրանքը Եվրոպա եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներ արտահանելու համար։

Այսպիսի հուսադրող հնչերանգով ավարտում ենք բարձր լեռնային համայնք Ծղուկի մասին հրապարակումը։

**ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆԱՆ**

Բաց նամակ 33 ազգային ժողովին

Ազգային ժողովի հարգարժան պատգամավորներ

«Հորիզոնի» կիրակնօրյա թողարկումներից մեկի ժամանակ խորը ցավով լսեցի, որ օրենսդիր մարմինն օրենք է ընդունել կաշառքի եւ կոռուպցիայի դեմ պայքարն ուժեղացնելու մասին:

Հարգելի օրենսդիր Դու ես ստեղծել կաշառքը, որ մի ավելորդ անգամ ես փորձ եմ անում այն վերացնել կամ նվազեցնել:

Երբ Աստված ստեղծեց Ադամին, նրան որպես կաշառք տվեց դրախտը, ասելով՝ վայելիր, միայն թե այս խնձորին ձեռք չտաս:

Հետագայում՝ Ադամի որդիներ Աբելը եւ Կայենը նվերներ տարան Աստծուն (ժամանակակից լեզվով ասած՝ կաշառք-մաղարիչ):

Աստված մեկի նվերը վերցնելով, մյուսինը՝ մերժելով, պատճառ դարձավ առաջին մարդկային արյունահեղության, նախանձից եղբայրը սպանեց եղբորը:

Հարգելի օրենսդիր Երբ դուք սաղմնային վիճակում գտնվում էիք ձեր մոր արգանդում, այնտեղից դուք ձեր ծնողի ձեռքով կաշառք էիք տալիս գննող բժշկին:

Ես համոզված եմ, որ ձեր առաջնեկի լույս աշխարհ գալուց դուք բժշկին մի կլորիկ գումար եք տվել:

Դուք պատկերացնո՞ւմ եք, թե ինչպիսի ծանր կացության մեջ կդնեք մարդկանց, եթե ձեզ հաջողվի (Աստված չտա) կաշառք վերացնել:

Երբ իրար հետեւից փոխվեցին Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի կենտրոնների առաջին քարտուղարները, եւ Դեմիրճյանը, եւ Շեւարդնաձեն ու Ալիեւը կենտրոնների պլենումներում խոսեցին կաշառքն արմատախիլ անելու մասին, հաջորդ օրվանից կաշառքի չափերը երեք-հինգ անգամ բարձրացան:

Հարգելի օրենսդիր Խղճացեք տառապյալ ժողովրդին, անիմաստ եւ հակաստվածային օրենքներ մի ընդունեք, պարզապես ընդունեք իմ առաջարկած տարբերակը, կոռուպցիան եւ կաշառքը համեք ստվերից, օրինակացրեք եւ օրինական հարկ դրեք նրա վրա:

Դրանով դուք կատարած կլինեք հայրենամարտ, օգտակար եւ բարի գործ:

ԿԱՌԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Մաքսիստ-հավասարար Կապան

Հինգ հաղթող եւ երեք բրոնզ

Կապանի «Գարեգին Նժդեհ» քիչ-բոքսինգի ակումբի մարզիկները մեդալների հարուստ ավարով են վերադարձել պանկրաս մարտարվեստների ասոցիացիայի ֆեդերացիայի կազմակերպած Երեւանի բաց առաջնությունից, որ կայացավ մայիսի 24-ին եւ 25-ին:

Սեմի կոնտակտ մրցաձևից անցկացված մրցամանը կապանյան ակումբը մասնակցում էր ութ մարզիկով, որոնցից հինգը կանգնեց պատվով պատվանդանի վերին հարթակին, իսկ երեքն արժանացավ բրոնզե մեդալի: Դարձյալ իր բարձր կարգը հաստատեց 54կգ քաշային Էրիկ Մուսայեյանը (16-17 տարեկանների պայքարում), ով վստահ հաղթանակներ տոնեց մրցակիցների նկատմամբ: Կապանցի մյուս մրցանակակիրներն ութ-տասը տարեկաններ էին, ասել է թե՛ սկսնակներն արդեն ոտք են գցում մեծերի հետ (մրցանակներ ձեռք բերելու առումով): Տպավորիչ էր յոթնամյա Կարեն Գալստյանի հաղթող ճանաչվելը, ով մենամարտում էր իրենից ավագ մրցակիցների դեմ: ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյանի փոխանցմամբ՝ այս առաջնությանը 150-ից ավելի մարզիկ էր մասնակցում, իսկ այս օրերին իր սաները մարզվում եւ նախապատրաստվում են Երեւանում կայանալիք Անդրանիկ Սարգսյանի հուշամրցաշարին: Մնում է ավելացնել, որ այս առաջնությանն ակումբի մարզիկների մասնակցությունը հնարավոր եղավ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի եւ Աժ Նախկին պատգամավոր Գագիկ Գեւորգյանի հովանավորությամբ, որոնց «Գարեգին Նժդեհ» ակումբը երախտագիտություն է հայտնում:



Մնում է ավելացնել, որ այս առաջնությանն ակումբի մարզիկների մասնակցությունը հնարավոր եղավ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի եւ Աժ Նախկին պատգամավոր Գագիկ Գեւորգյանի հովանավորությամբ, որոնց «Գարեգին Նժդեհ» ակումբը երախտագիտություն է հայտնում:

Մնում է ավելացնել, որ այս առաջնությանն ակումբի մարզիկների մասնակցությունը հնարավոր եղավ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի եւ Աժ Նախկին պատգամավոր Գագիկ Գեւորգյանի հովանավորությամբ, որոնց «Գարեգին Նժդեհ» ակումբը երախտագիտություն է հայտնում:

ՎԱԴՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ



ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ բաժնետերերը հրավիրվում են մասնակցելու «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին:

Տարեկան ընդհանուր ժողովը փեդի կունենա ընկերության վարչական շենքում /33 Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 20/ 2014թ. հունիսի 30-ին ժամը 16.00-ին: Տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու վերջին ժամկետը՝ 27.06.2014թ. ժամը 11.00-ն է:

Տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

- 1. Ընկերության գործունեության մասին տնօրենի հաշվետվությունը,
2. Ընկերության գործունեության հաշվետվությունների, հաշվեկշռի, շահույթների եւ վնասների հաշվի հաստատում,
3. Շահույթների եւ վնասների բաշխման հաստատում,
4. Շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունում:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում, օրակարգային հարցերին վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու եւ ստանալու համար բաժնետերերը կարող են դիմել ընկերության խորհրդին /33 Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 20 /հունիսի 16-ից մինչեւ 27-ը, աշխատանքային օրերին, ժամը 11.00-ից մինչեւ 15.00-ը:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Այունյաց երկիր» խմբագրակազմը ցավակցում է Սարո Թադևոսյանին՝ քրոջ՝ Մելանյա Թադևոսյանի անժամանակ մահվան կապակցությամբ:

Եռօրյա հանգիստ Արցախում

Մայիսի 6-ին Կապանի մշակութային կենտրոնի «Պարի աստղեր» շուր սպորտիստները հինգ ամիս առաջ «Դանդի փրիշու մեթալս Կապան» ՓԲ ընկերության խոստացած անակնկալով սկսեցին ճամփորդություն Արցախ աշխարհ: Բոլորս երկար էին սպասել այդ օրվան, շաբաթիս համար առաջին հիշարժան այցն էր լինելու: ԼՂՀ-ում անցկացրած այդ երեք օրը մեր հուշերում կմնա հավեր:

Մենք հպարտ ենք, որ մեր քաղաքում կան այնպիսի մարդիկ, ովքեր պատրաստ են օգնել երիտասարդներին եւ նրանց մեջ բորբոքել հայրենասիրության կրակը: Պարտույց է Քոչարյանի դեկավարությամբ «Պարի աստղեր» շուր սպորտիստների ավագ սաները կարողացան այցելել մի շարք պատմական եւ տեսարժան վայրեր: Շուշիի Սբ Դավանչեցոց եկեղեցին, «Մենք ենք, մեր լեռները» քանդակը, Գանձասարի եկեղեցին, Ելիզավետպոլի դարպասները եւ ամենակարեւորը, որ պարեցինք Շուշիի Ջորջուզի տարածքում

(որն այժմ ներառված է «Հունոտի կիրճ» արգելոցի մեջ):

Արցախ մտնելուն պես առաջին իսկ քայլը սկսվեց Գագիկ Ավչյանի կողմից վերականգնված եւ որպես հուշարձան տեղադրված S-72 տանկից, որը մասնակցել է Շուշիի ազատագրմանը: Հայ ազատամարտիկներն իրենց այրյան գնով են ազատագրել Շուշին: Նշեն, որ Շուշի անվանումն առաջացել է «շոշ» բառից, որն Արցախի բարբառում նշանակում է ծառի այն նորաբույս ճյուղը, որն ամենաբարձրն է: Այս անվանումը քաղաքը ստացել է իր աշխարհագրական բարձր դիրքի համար: Իրոք, բացառիկ դիրք ունի Շուշին: 1992թ. մայիսի 9-ի առավոտյան Շուշիի դռները բաց էին իր զավակների առջև: Միայն դրանից հետո կարող էին լինել Լաչինը, Քարվաճառը, ազատագրված մյուս տարածքները:

– Ինձ շատ է հիացրել ԼՂՀ-ի մայրաքաղաք Ստեփանակերտի մաքրությունը եւ մարդկանց կարգապահությունը, հանգիստը վերածվում է մի դրախտի, – ասաց Նորայր Գասպարյանը:

– Շատ տպավորված եմ նրբակերտ եւ գեղեցիկ նորակառույց շենքերով: Գերված եմ քաղաքի լուսավորությամբ եւ գեղեցիկ պատանուներով: Այս եռօրյա այցն ինձ շատ դրական լիցքեր հաղորդեց, – նշեց Թերեզա Ծատրյանը:

– Երկու շաբաթ տանն էի մնացել՝ ոտքիս վնասվածքի պատճառով, իսկ երբ Ստեփանակերտի փողոցներով էի քայլում, մոռացել էի, որ ոտքս մի քանի օր առաջ վնասված է եղել: Հողը կարծես բուժում է մարմինդ, իսկ օդը քեզ նոր շունչ է հաղորդում, – իր ոգեւորությունն է հաղորդում Նելլի Սիմոնյանը:

– Տպավորված եմ այս կարճ եւ հաճելի ճամփորդությունից. հայոց բանակ գնալով իմ հուշերի էջերում եւս մի թերթ կավելացնեմ՝ «Հանգիստ Արցախում» վերնագրով: Շուտով ինքս զինվոր եմ դառնալու. եւ ամբողջ աշխարհին միայն խաղաղություն եմ ցանկանում, – մաղթում է Կարեն Հարությունյանը:

ԻՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ Կապանի N2 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի

Այունյաց երկիր
S U Ս Ե Լ Օ Ր Յ Ա Թ Ե Ր Թ
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵՆ ԱՆԵՍՏՆՅԱՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am
Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը մերկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«ԳՈՎԱԶԳ» - ՃԱՆՈՒՑՈՒՄ բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:
ՌՆՁԱՆԻ ՏԱԿ ԵՎ ԿԱՊԻՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒՔԵՐ:
Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 12.06.2014թ.: